# Վանաձոր քաղաքի ՏԻՄ կառավարման գնահատում

## 2008-2012 թթ.

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

Վանաձոր 2013

# Վանաձոր քաղաքի ՏԻՄ կառավարման գնահատում

2008-2012 թթ.

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

Հեղինակային խումբ՝

Արթուր Սաքունց – ծրագրի ղեկավար
Վարդինե Գրիգորյան – ծրագրի համակարգող
Աբրահամ Արտաշեսյան–Համայնքի բյուջեի մշտադիտարկման փորձագետ
Սարգիս Գալստյան – ՏԻՄ որոշումների մշտադիտարկման փորձագետ

Վանաձոր համայնքի ՏԻՄ մշտադիտարկումը և սույն տպագրությունը իրականացվել են Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստանի ԱՄՆ ՄԶԳ միջոցով «ՏԻՄ Կառավարման մշտադիտարկում» ծրագրի շրջանակներում:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետին:

# Բովանդակություն

Ներածություն ..... 7

Հիմնական եզրակացություններ ..... 8

1. Վանաձոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 2008-2012 թթ. ընդունած որոշումների ուսումնասիրություն ..... 12

Համայնքի ավագանու որոշումների ուսումնասիրություն ..... 13

Համայնքի ղեկավարի որոշումների ուսումնասիրություն ..... 23

2. Վանաձոր համայնքի 2008-2012 թթ. բյուջեի ուսումնասիրություն ..... 45

Եկամուտների վերլուծություն ..... 46

Ծախսերի վերլուծություն ..... 52

3. Վանաձոր համայնքի 2009-2012 զարգացման քառամյա ծրագրի արտացոլումը համայնքի բյուջեում և ՏԻՄ որոշումներում ..... 61

4. Վանաձոր համայնքի 2009 - 2012 թթ. և 2013 -2016 թթ. զարգացման ծրագրերի համեմատական ուսումնասիրություն ..... 69

Մեթոդական առաջարկություններ ..... 78

Օգտագործված գրականություն ..... 79

# Ներածություն

2012 թ. նոյեմբերի 1-ից Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստանի աջակցությամբ ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացնում է Վանաձոր համայնքի ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների մշտադիտարկում, որի նպատակն է նպաստել Վանաձոր համայնքի ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը:

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել և գնահատվել է տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների ընդունման իրավաչափությունը և համապատասխանությունը ՀՀ ՏԻՄ օրենքին և ՀՀ օրենսդրությանը, այդ որոշումների համապատասխանությունը համայնքի բնակիչների շահերին և մարդու իրավունքների սկզբունքներին, ինչպես նաև ընդունված որոշումների և բյուջետային հատկացումների համապատասխանությունը համայնքի ղեկավարի քառամյա և տարեկան ծրագրերին:

Մշտադիտարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք է բերվել Վանաձորի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջից, ինչպես նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված տեղեկատվության հարցումների միջոցով:

Ուսումնասիրվել են համայնքի վերջին 4 տարիների բյուջեի եկամտային և ծախսային մասերը: Ուսումնասիրության առարկա է հանդիսացել նաև տեղական բյուջեով նախատեսված հատկացումների համապատասխանությունը համայնքի զարգացման քառամյա ծրագրով սահմանված նպատակներին և խնդիրներին:

Ներկայացվող ուսումնասիրությամբ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ քաղաքացիական հասարակության վերահսկողության նոր մոտեցում, որը կարող է կիրառվել այլ շահագրգիռ կողմերի, քաղաքացիական հասարակության կառույցների, նախաձեռնող խմբերի ինչես նաև պետական և կառավարման մարմինների կողմից:

# Հիմնական եզրակացություններ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից Վանաձոր համայնքի ինքնակառավարման մարմինների (հոկտեմբեր 2008 – Նոյեմբեր 2012թթ. ժամանակահատվածում) կողմից ընդունված որոշումների, նշված ժամանակահատվածում համայնքի բյուջեի և համայնքի զարգացման քառամյա ծրագրի համեմատական ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- Ավագանին չի իրականացրել համայնքի ղեկավարի նկատմամբ վերահսկողության գործառույթները: Քվեարկության արդյունքները ցույց են տալիս, որ ավագանու նիստերում որոշումներն ընդունվում են միաձայն՝ («դեմ” արտահայտված ձայները կազմում են ընդհանուր քվեարկությունների 1.8%-ը):
- Ցածր է ավագանու անդամների նախաձեռնողականությունը: Քառամյա գործունեության ընթացքում ավագանու ընդունած 362 որոշումներից միայն 2-ի նախաձեռնողն է հանդիսացել ավագանու անդամը:
- Համայնքի ավագանին չի իրականացնում ՏԻՄ օրենքով սահմանված իր կարևոր լիազորություններից մեկը՝ քառամյա գործունեության ընթացքում համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի ոչ մի որոշում քննարկման հարց չի դարձել:
- Թեև «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով արտոնությունները նախատեսված են հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար, բացի Հայրենական Մեծ պատերազմի վետերանների (թվով 5 որոշում –ավտոմեքենայի գույքահարկը չգանձելու մասին) սոցիալապես անապահով ընտանիքներին՝ գույքահարկի գծով արտոնություններ չեն կիրառվել: Միաժամանակ՝ «Վանաձոր – Քիմպրոմ» ՓԲԸ –ի գույքահարկի գծով առաջացած տույժերից պակասեցվել է 7 մլն 797 հազ. դրամ, իսկ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի գույքահարկի գծով առաջացած տույժերը՝ 4 մլն 417 հազ 966 դրամ:
- Անբավարար է ՏԻՄ գործունեության հրապարակայնության մակարդակը, մասնավորապես ըստ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի յուրաքանչյուր 2 հազար բնակչի հաշվարկով 1 ցուցատախտակ չի տեղադրված համայնքում, որի վրա պետք է փակցվեն ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումները:
- Չունենալով բնակարանի կարիքավորների հերթացուցակ (ոչ աղետի հետևանքով բնակարան կորցրած քաղաքացիների), չսահմանելով արտոնությունների կարգ՝ առանց իրավական հիմքերի՝ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումներով օտարվել կամ օգտագործման իրավունքով տրամադրվել են բնակարաններ՝ տարբեր պաշտոնատար անձանց առաջարկությունների և միջնորդագրերի հիման վրա:
- Ուսումնասիրված ժամանակաշրջանում համայնքի ավագանու համաձայնությամբ համայնքի ղեկավարի կողմից օտարվել և օգտագործման իրավունքով տրամադրվել են նկուղներ, տաղավարներ, ավտոկանգառներ, ստորգետնյա անցումներ և շարժական գույք: Նկուղների օտարումը հիմնականում կատարվել է համայնքի կենտրոնական թաղամասերում: Օտարված նկուղները հետագայում օգտագործվել են որպես սպասարկման օբյեկտներ, որոնց սպասարկման համար

շենքերի հիմքային մասերում, մայթերի հաշվին, բացվել են դռներ՝ թուլացնելով շենքերի սեյսմակայունությունը, անհարմարություններ ստեղծելով հետիոտների համար:

- Գույքի անհատույց օտարման և օգտագործման իրավունքով տրամադրման վերաբերյալ որոշումների զգալի մասը չի բխում հանրային շահերից, իսկ գործընթացը հաճախ ուղեկցվում է օրենքով սահմանված կարգի խախտումով:
- Կիսակառույց շինությունները և բացվածքները օտարվել են ուղղակի վաճառքով՝ առանց աճուրդ հայտարարելու:
- Համայնքի ավագանին հետևողական չէ իր կողմից ընդունված որոշումների կատարմանը: Օրինակ՝ 1) համայնքի 2 ստորգետնյա անցումների բարեկարգման և նպատակային օգտագործման համար համայնքի ավագանին որոշումներ է ընդունել այդ տարածքները 10 տարի ժամկետով օգտագործման իրավունքով տրամադրելու մասին: Չորս տարվա ընթացքում որևէ բարեկարգման աշխատանքներ չեն իրականացվել և ստորգետնյա անցումները չեն շահագործվում: 2) Կեղտաջրերի մաքրման կայանը օտարվել է հետագայում նոր ժամանակակից մաքրման կայան կառուցելու նախապայմանով (որոշում թիվ 78, 2009թ.), սակայն օտարման գործընթացը ավարտվել է և մոռացության է մատնվել այդ տարածքում նոր մաքրման կայան կառուցելու հարցը:
- Համայնքի ղեկավարը, շրջանցելով օրենքի պահանջները, 2011 թվականի փետրվարի 1-ին համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել որոշման նախագիծ, որով համայնքի ավագանուն զրկում է ՏԻՄ օրենքով (հոդ. 16 կետ 20) համայնքի սեփականություն համարվող գույքը (տվյալ դեպքում հողամասերը) օտարելու և վարձակալության տրամադրելու որոշում կայացնելու լիազորությունից: Ավագանին միաձայն (կողմ-9 դեմ-0 ձեռնպահ-0) քվեարկությամբ հաստատել է որոշումը, համայնքային սեփականության հողամասերը օտարելու և օգտագործման իրավունքով տրամադրելու մասին որոշումներ կայացնելու լիազորությունները վերապահելով համայնքի ղեկավարին: Միաժամանակ այդ որոշումից հետո ավագանին մի քանի որոշումներ է ընդունել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման վերաբերյալ և հասկանալի չէ, թե ինչ սկզբունքով է սահմանվում, թե որ դեպքերում գույքի օտարման վերաբերյալ որոշում պետք է կայացնի ավագանին և որ դեպքերում՝ համայնքի ղեկավարը:
- Սահմանափակ ֆինանսական միջոցները հնարավորություն չեն տալիս համայնքին միաժամանակ լուծումներ տալ բազմաթիվ հիմնախնդիրների, որոնք հիմնականում կապված են համայնքի ենթակառուցվածքների թերզարգացվածության հետ, ուստի կարևորվում է հիմնախնդիրների առաջնահերթության սահմանումը, որը ենթադրում է համայնքի կարիքների գնահատում: Մեր գրավոր հարցման արդյունքում պարզել ենք, որ համայնքի ղեկավարի կողմից համայնքի կարիքների գնահատում չի կատարվում և դասակարգված չեն համայնքի հիմնախնդիրները՝ ըստ առաջնահերթությունների:
- Նշված ժամանակահատվածում ընդունված 6902 որոշումներից 2065ը (30%) վերաբերել են համայնքի սեփականություն հանդիսացող տարբեր գույքի իրացմանը կամ օտարմանը: Նշված օտարումների արդյունքում ստացվել է մոտ 1

290 902 հազ. դրամ, ըստ այդմ յուրաքանչյուր օտարված գույքի միջին արժեքը ստացվում է 625 134 դրամ, ինչը չի խոսում համայնքային գույքի արդյունավետ տնօրինման մասին: Նշենք, որ սեփական եկամուտների աճը մեկ բնակչի հաշվով 2008-2012 թթ. կազմել է 400 դրամ, սակայն նշված ժամանակահատվածում համայնքային բյուջեում համայնքի սեփական եկամուտների տեսակարար կշիռը նվազել է, զուգահեռաբար ավելացել են պետական տրանսֆերտները

- Վանաձոր համայնքի բյուջեն բացարձակ թվերով դրսևորում է աճի միտում սկսած 2009թ-ից: Սակայն, բացարձակ աճի տեմպերը բավարար չեն ինչի մասին վկայում են միջին հանրապետական և միջին մարզային ցուցնաիշների համեմատությունը:
- Հայանքի սեփական եկամուտների տեսակակար կշիռը տարեց տարի նվազում է առաջացնելով ֆինանսական պլանավորման ինքնուրույնության նվազեցում և կախվածություն պետական տրանֆերտներից:
- Համայնքում մեկ շնչին ընկնող եկամուտը համադրելի է միջին մարզային ցուցանիշների հետ, սակայն զգալիորեն զիջում է միջին հանրապետական ցուցանիշին: Հատկանշնական է, սեփական եկամուտների հաշվին մեկ շնչին ընկնող եկամտի աճը 2008-2012թթ համար, որը կազմել է մոտ 400 դրամ և 2009-ից հետո ունի նվազման միտում:
- Համայնքի ծախսերը բացարձակ մեծությամբ աճում են, սակայն աճի տեմպը զիջում է միջին հանրապետական և մարզային ցուցանիշներին: Ծախսերի պլանավորման մեջ զգացվում է չափազանց մեծ զգուշություն ինչը խոչնդոտում է զարգացմանը:
- Գործառնական դասակարգմամբ ծախսային հոդվածների մեջ իր տեսակարար կշիռներով գլխավորում են կրթության, ընդհանուր բնույթի ծառայության և շրջակա միջավայրի ուղությամբ կատարված ծախսերը: Կրթության ուղղությամբ դիտվում է թերի պլանավորում, ինչը ճշտվում է տարվա ընթացքում: Ընդհանուր բնույթի ծառայությունների գծով կատարված ծախսերի տեսակարար կշիռները համընկնում են միջին հանրապետական ցուցանիշներին
- Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսը պլանավորվում են հիմնական միջոցների կանխատեսվող վաճառքներին և համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներին համապատասխան: Քիչ է դիտարկվում ընթացիկ եկամուտների հաշվին կատարվող կապիտալ ներդրումներ:
- Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը, հանդիսանալով համայնքի հիմնախնդիրներն սահմանող փաստաթուղթ, ենթակա է հրապարակման և քննարկման, սակայն դրանց նախագծերը չեն քննարկվել հանրային լսումներում և ընդամենը տեղադրվել են համայնքի պաշտոնական կայքէջում, ինչը համայնքային մասնակցության ապահովման արդյունավետ մեխանիզմ չէ:
- Համայնքի ղեկավարի կողմից մշակված և ավագանու կողմից հաստատված համայնքի զարգացման քառամյա ծրագրերն ունեն ձևական բնույթ և հաշվի չեն առնում համայնքի հիմնախնդիրներն ըստ առաջնահերթությունների, ինչը կարող ենք եզրակացնել նրանից, որ համայնքի հիմնախնդիրների ուսումնասիրություն չի իրականացվել, բնակիչները հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու իրենց մտահոգությունները: Սրա մասին վկայում է 2009-2012 թթ. և 2013-2016 թթ.

զարգացման ծրագրերի համեմատությունը, որոնք ըստ էության բացի որոշ սրբագրումներից միևնույն փաստաթուղթն են հանդիսանում:

- 2009-2012 թթ. համայնքի ավագանին իր ոչ մի նիստում չի անդրադարձել համայնքի քառամյա ծրագրով նախատեսված խնդիրների լուծման ընթացքին, իսկ համայնքի ղեկավարի ընդունած որոշումները չեն բխել քառամյա ծրագրով սահմանված խնդիրների լուծման անհրաժեշտությունից:
- Համայնքի տարեկան բյուջեի և քառամյա զարգացման բյուջեի կապը չնչին է: Տարեկան բյուջեները հիմնականում չեն արտացոլում քառամյա ծրագրով նախանշած նպատակները և ֆինանսական ռեսուրսներն ուղղված չեն այդ նպատակների իրականացմանը:
- Համայնքի ղեկավարի կողմից 2008թ. հոկտեմբերից - 2012 թթ նոյեմբեր ընդունված 6902 որոշումներն), ըստ ՏԻՄ օրենքով սահմանված պարտադիր, պատվիրակված և կամավոր լիազորությունների բաշխվում են հետևյալ կերպ՝ 6447 պարտադիր լիազորություններ, 454 պատվիրակված լիազորություններ և 1 կամավոր լիազորություն: Ընդհանուր առմամբ նշված 4 տարիների ընթացքում համայնքի ղեկավարն իրականացրել է իրեն վերագրված լիազորությունների 23.5 %-ը:

Աղյուսակ 1. Համայնքի ղեկավարի լիազորություններ

| | Ըստ ՏԻՄ օրենքի սահմանված | Փաստացի իրականացված | % |
|---|---|---|---|
| Պարտադիր լիազորություններ | 55 | 18 | 32.7% |
| Պատվիրակված լիազորություններ | 20 | 4 | 20.0% |
| Կամավոր լիազորություններ | 23 | 1 | 4.3% |
| Ընդամենը | 98 | 23 | 23.5% |

Այսպիսով համայնքի ղեկավարն ամբողջ ծավալով չի իրականացրել ՏԻՄ օրենքով սահմանված իր լիազորությունները, որը ևս հանդիսանում է համայնքի ղեկավարի գործունեության գնահատման կարևոր ցուցանիշ:

# 1. Վանաձոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 2008-2012 թթ. ընդունած որոշումների ուսումնասիրություն

Հայաստանի Հանրապետության համայնքներում տեղական ինքնակառավարման իրականացումը հիմնվում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դրույթների և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (հետայսու՝ ՏԻՄ օրենք) սահմանված սկզբունքների վրա: Տեղական ինքնակառավարման համակարգը նպատակաուղղված է երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական և կազմակերպակառավարչական բնույթի հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը: Հայաստանի Հանրապետությունում անցումը տեղական ինքնակառավարման համակարգին սկսվել է 1996 թվականից և գտնվում է կայացման և ինքնահաստատման փուլում: ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ տեղական ինքնակառավարումը ժողովրդի կողմից իրեն պատկանող իշխանության ձևերից մեկն է:

Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական դաշտը բավարար հիմքեր է ստեղծել տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ կայացման համար, սակայն դեռևս կան հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են այդ գործընթացի լիարժեք իրականացմանը: Վանաձոր համայնքում դեռևս չի ձևավորվել տեղական խնդիրների լուծմանը բնակչության մասնակցության մշակույթ: Չնայած համայնքի ավագանու ընտրությունները տեղի են ունենում մրցակցային պայմաններում, սակայն ավագանին լիարժեք հակակշիռ չի հանդիսանում համայնքի ղեկավարին, իսկ շահերի բախումը բացառող արդյունավետ ընթացակարգերի բացակայությունը հնարավորություն չի ընձեռում արդյունավետ կարգավորել համայնքային ռեսուրսների կառավարումը:

Փորձը ցույց է տալիս, որ անբավարար հրապարակայնությունը հանգեցնում է ժողովրդավարության պակասի, խաթարում է համայնքի բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, նպաստում է ֆինանսական միջոցների փոշիացմանը և ձևավորում է անվստահություն տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ: Ըստ այդմ տեղական ինքնակառավարման մարմինների (հետայսու՝ ՏԻՄ-երի) գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը ապահովող մեխանիզմների մշակումը բացառիկ կարևորություն կարող են ունենալ ժողովրդավարության հաստատման ու հանրային կառավարման համակարգի բարելավման համար:

Համաձայն ՏԻՄ օրենքի (հոդ. 77[1]), իրավական հսկողության բարձրագույն մարմնի հաստատած աշխատանքային ծրագրին համապատասխան, համայնքներում վարչական վերահսկողություն իրականացնում է մարզպետը իր կողմից ձևավորած հանձնաժողովի միջոցով: Վարչական վերահսկողությունը սահմանափակվում է բացառապես համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելու գործառույթով:

Մարզպետների կողմից վարչական ստուգումներ սկսվել են իրականացվել 2006 թվականից: Հատկանշական է, որ Վանաձոր համայնքը անհասկանալի պատճառներով բարձրագույն մարմնի կողմից հաստատված աշխատանքային ծրագրերում երբևէ չի ընդգրկվել և համայնքի ՏԻՄ մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական վերահսկողություն չի իրականացվել:

## Համայնքի ավագանու որոշումների ուսումնասիրություն

Ուսումնասիրվել է համայնքի ավագանու որոշումները 21.10.2008 - 8.11.2012թթ. ժամանակահատվածում: Նշված ժամանակահատվածում ընդունվել է թվով 362 որոշում, որոնցից՝ անհատական 253 և նորմատիվ 109:

Աղյուսակ 2. Համայնքի ավագանու քվեարկության պատկերը

| Տարեթվեր | Նիստերի թիվը | Որոշումներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|
| 2008 | 2 | 29 | 279 | 6 | 25 |
| 2009 | 10 | 106 | 1200 | 26 | 19 |
| 2010 | 12 | 93 | 987 | 19 | 12 |
| 2011 | 8 | 71 | 713 | 10 | 9 |
| 2012 | 8 | 63 | 647 | 9 | 8 |
| Ընդամենը | 40 | 362 | 3826 | 70 | 73 |

Վանաձոր համայնքի ավագանին լուրջ հակակշիռ չի հանդիսացել համայնքի ղեկավարին և «դեմ» արտահայտված ձայները կազմում են ընդամենը 1.8%, ընդ որում, որոշմանը «դեմ» քվեարկությունը հաճախ անձնավորված բնույթ է կրել, այսինքն՝ նույնատիպ հարցերի քննարկման ժամանակ ավագանու անդամը մի դեպքում «կողմ» է քվեարկել, մեկ այլ դեպքում՝ «դեմ»:

Ցածր է ավագանու անդամների նախաձեռնությունների մակարդակը: Քառամյա գործունեության ընթացքում ավագանու անդամի նախաձեռնությամբ ընդամենը երկու որոշում է ընդունվել (Հայկ Հովսեփյանի առաջարկությամբ)՝ մեկ քաղաքացու բնակարան նվիրելու վերաբերյալ և ապօրինի զբաղեցրած բնակարանների հետագա տնօրինման կարգը կանոնակարգելու մասին (ավագանու թիվ 52, 17. 10. 2001թ. որոշում):

Աղյուսակ 3. Համայնքի ավագանու նիստերի ժամանակացույց

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2008 | 4.12 | 26.12 | | | | | | | | | | |
| 2009 | 23.01 | 13.02 | 10.03 | 23.04 | 12.06 | 24.07 | 15.09 | 6.11 | 25.11 | 21.12 | | |
| 2010 | 5.02 | 4.03 | 16.04 | 6.05 | 27.05 | 22.06 | 30.07 | 12.08 | 23.09 | 26.10 | 19.11 | 17.12 |
| 2011 | 1.02 | 23.02 | 15.03 | 10.05 | 29.07 | 13.09 | 28.10 | 16.12 | | | | |
| 2012 | 3.02 | 16.03 | 11.04 | 30.05 | 29.07 | 14.08 | 17.10 | 07.11 | | | | |

2011 թվականի ընթացքում մեկ անգամ չի կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (հետայսու ՏԻՄ օրենք) - «Ավագանու նիստերն

անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ» պահանջը (հոդ. 11): Չորրորդ նիստն անց է կացվել 10.05.2011թ. հինգերորդ նիստը՝ 29.07.2012թ.:

Համաձայն ՏԻՄ օրենքի 6-րդ հոդվածի թիվ 7 կետի և 16-րդ հոդվածի թիվ 7-1 կետի, համայնքի ավագանին պետք է վերահսկողություն իրականացնի համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ և կարող է դատական կարգով վիճարկել համայնքի ղեկավարի՝ օրենքին և այլ իրավական ակտերին հակասող որոշումները: Քառամյա գործունեության ընթացքում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է թվով 6902 որոշում և համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի ոչ մի որոշում չի վիճարկվել և վերահսկողություն չի իրականացվել համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ:

Համայնքի ավագանու կողմից չի կատարվել ՏԻՄ օրենքի (հոդ. 16 կետ 5) կամավոր լիազորությունների իրականցման կարգը սահմանելու և անհրաժեշտ ֆինանսական միջոցները որոշելու պահանջը:

Աղյուսակ 4. Որոշումների դասակարգում ըստ բնագավառի

| Բնագավառներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Համայնքի սեփականությունը համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին որոշումներ: | 11 | 36 | 36 | 19 | 25 | 127 | 35.1% |
| 2. Ֆինանսների բնագավառում ընդունված որոշումներ: | 3 | 24 | 34 | 32 | 17 | 110 | 30.4% |
| 3. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու, համայնքային նշանակության փողոցների հրապարակների, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման, հուշաքարերի տեղադրման համաձայնություն տալու մասին որոշումներ: | 2 | 15 | 4 | 6 | 6 | 33 | 9.1% |
| 4. Քաղաքաշինության, կոմունալ տնտեսության և հողօգտագործման բնագավառներում ընդունված որոշումներ: | 4 | 2 | 3 | 2 | 2 | 13 | 3.6% |
| 5. Համայնքի բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերստեղծման, լուծարման, ղեկավարների թեկնածուներին հաստատման, միջհամայնքային միավորումներ ձևավորելու և այլ համայնքների հետ համագործակցելու պայմանագրերը հաստատելու, միջհամայնքային միություններ ստեղծելու մասին որոշումներ: | 6 | 14 | 4 | 5 | 4 | 33 | 9.1% |
| 6. Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում | 0 | 0 | 1 | 0 | 1 | 2 | 0.6% |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ընդունված որոշումներ: | | | | | | | |
| 7. Ավագանու որոշումներում փոփոխություն կատարելու մասին որոշումներ: | 2 | 12 | 11 | 6 | 3 | 34 | 9.4% |
| 8. Այլ բնագավառներում | 1 | 2 | 0 | 1 | 5 | 9 | 2.5% |
| 9. Ուղերձ | | 1 | | | | 1 | 0.3% |
| **Ընդամենը** | **29** | **106** | **93** | **71** | **63** | **362** | **100%** |

## 1. Համայնքի սեփականությունը համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին որոշումներ

Հաստատվել է թվով 127 որոշում (ՏԻՄ օրենք հոդ. 16 կետ 20), այդ թվում.

Աղյուսակ 5. Գույքի օգտագործման և օտարելու մասին որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1.1 Բնակարանների և բնակելի տարածքների (հանրակացարանների) օտարելու և օգտագործման իրավունքով տրամադրելու մասին որոշումներ: | 2 | 3 | 1 | 2 | 3 | 11 | 9% |
| 1.2 Ոչ բնակելի տարածքներ անշարժ և շարժական գույք, հողամասեր օտարելու և օգտագործման իրավունքով տրամադրելու մասին որոշումներ: | 8 | 29 | 29 | 16 | 19 | 101 | 80% |
| 1.3 Հողամասերի վարձավճարները և ոչ բնակելի տարածքների սակագները սահմանելու, համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու և օգտագործման իրավունքով տրամադրելու մրցույթ և աճուրդ հայտարարելու մասին որոշումներ: | 1 | 4 | 6 | 1 | 3 | 15 | 12% |
| **Ընդամենը** | **11** | **36** | **36** | **19** | **25** | **127** | **100%** |

### 1.1. Բնակարանների և բնակելի տարածքների (հանրակացարաններ) օտարելու և օգտագործման իրավունքով տրամադրելու մասին թվով 11 որոշում:

ՀՀ Սահմանադրության հոդված 34-ի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար»:

Աղետի գոտում առաջնահերթ է համարվում երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած քաղաքացիներին բնակարանով ապահովելու խնդիրը: Ժամանակի ընթացքում առաջնահերթ դարձավ նաև տնակային թաղամասերի ժամանակավոր կացարաններում (տնակներում) բնակվող ընտանիքներին, որոնք չեն համարվում աղետի հետևանքով

բնակարան կորցրած քաղաքացիներ, բնակարանով կամ բնակելի տարածքներով ապահովելու խնդիրը: Այս խնդիրները լուծելու համար ՀՀ կառավարությունը աղետի գոտու համար ընդունել է որոշումներ, որոնք կանոնակարգում են աղետի գոտում բնակարանի կարիք ունեցող քաղաքացիների հաշվառման և բնակարաններով ապահովման խնդիրները:

Այս ուղղությամբ ընդունվել են Կառավարության թվով երկու որոշումներ.

- Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը սահմանված է ՀՀ Կառավարության 1999 թ. N 432 որոշմամբ, որի համաձայն՝ պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանները բաշխում և «հատկացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարը» համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաստատված հերթացուցակների համաձայ՝ դրանցում ընդգրկված քաղաքացիների հերթացուցակում ընդգրկվելու չափանիշների արդյունքներով:
- ՀՀ Կառավարության «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում վերականգնման ենթակա տարածքների ոչ հիմնական շինություններում բնակվող, ոչ աղետի (երկրաշարժի) հետևանքով անօթևան մնացած, մշտական բնակության վայր չունեցող քաղաքացիներին բնակտարածությամբ ապահովելու և վերաբնակեցնելու կարգը հաստատելու մասին» 2002 թվականի թիվ 317 որոշումը:

Հարցման արդյունքում համայնքի ղեկավարը տրամադրել է 2010 թվականին հաստատված երկրաշարժից բնակարանները կորցրած բնակարանի կարիքավոր քաղաքացիների հերթացուցակը, որտեղ հաշվառված են թվով 62 քաղաքացիներ:

2013-2016 թթ. զարգացման ծրագրով նախատեսված է բնակարանային մակերեսների ավելացում, որը պետք է իրականացվի կիսակառույց շինությունների ավարտման և նոր բնակելի շենքերի կառուցման միջոցով:

Ծրագրով նախատեսված չեն պահանջվող աշխատանքների ծավալները և համայնքի ղեկավարի աշխատակազմը չի կատարել համայնքի բնակարանի կարիքավոր քաղաքացիների հաշվառում և քաղաքապետարանը չունի բնակարանի կարիքավորների հերթացուցակ: Հստակեցված չէ, թե այդ բնակարանները ում համար են նախատեսված, ինչ քանակով և ինչ կարգով են բաշխվելու:

Չունենալով բնակարանի կարիքավորների հերթացուցակ (ոչ աղետի հետևանքով բնակարան կորցրած քաղաքացիների), չսահմանելով արտոնությունների կարգ՝ առանց իրավական հիմքերի համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումներով օտարվել կամ օգտագործման իրավունքով տրամադրվել են բնակարաններ տարբեր պաշտոնատար անձանց առաջարկությունների և միջնորդագրերի հիման վրա (2009 թ. թիվ 83, 2010 թ. թիվ 58, 2011 թ. թիվ 4, 2012 թ. թիվ 20 որոշումներ):

### 1.2. Ոչ բնակելի տարածքներ (նկուղներ, տաղավարներ, ստորգետնյա անցումներ, կիսակառույցներ, բացվածքներ, ոչ բնակելի այլ շինություններ) և գույք (շարժական) օտարելու և օգտագործման իրավունքով տրամադրելու մասին թվով 96 որոշում:

ՀՀ Կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ սահմանվել է համայնքների սեփականություն հանդիսացող գույքը, որի կազմում ընդգրկված են տվյալ համայնքի տարածքում գտնվող և ներհամայնքային նշանակություն ունեցող օբյեկտներ: Պետական և համայնքային սեփականության տարանջատման արդյունքում համայնքին հանձնված գույքի բազայի վրա ձևավորվել է համայնքային սեփականությունը:

Համայնքային սեփականության գույքը կարող է օգտագործվել համայնքի կողմից ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած գործառույթների իրականացման նպատակով, բայց առաջին հերթին պետք է նպատակաուղղված լինի ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացմանը:

Համայնքային սեփականության գույքը օրենքով սահմանված կարգով կարող է օտարվել կամ օգտագործման իրավունքով տրամադրվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց և համայնքի ավագանին պետք է հետևողական լինի, որպեսզի թույլատրի օտարել միայն անհեռանկարային գույքը և միևնույն ժամանակ արգելի հանրային նշանակության օբյեկտների օտարումը: Վանաձորում կան նախադեպեր, երբ օտարվել են մշակութային օբյեկտներ, կամ մշակութային օբյեկտների պահպանման և սպասարկման համար նախատեսված հողամասերը տրամադրվել են կառուցապատման իրավունքով (Շ. Ազնավուրի անվան մշակույթի պալատի տարածք):

Ուսումնասիրված ժամանակաշրջանում համայնքի ավագանու համաձայնությամբ համայնքի ղեկավարի կողմից օտարվել և օգտագործման իրավունքով տրամադրվել են նկուղներ, տաղավարներ, ավտոկանգառներ, ստորգետնյա անցումներ և շարժական գույք: Գույքի օտարումը կոռուպցիոն ռիսկեր է պարունակում և գործընթացը հաճախ ուղեկցվում է օրենքով սահմանված կարգի խախտումով: Մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում նույնպես արձանագրվել են նմանատիպ խախտումներ, մասնավորապես, համայնքի ղեկավարի 09.04.2009 թ. որոշումով անհատույց սեփականության իրավունքով վերահատկացվել է 14000 քառ. մ հողատարածք Գործարանային փողոցի թիվ թիվ 13 հասցեում, հողամասի հետագայում օտարման դեպքում տվյալ պահին գործող կադաստրային արժեքը մուծելու պայմանով: Մինչդեռ ՀՀ «Հողային օրենսգրքի» 64 –րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն հողամաս ձեռք բերողը համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի հողհատկացման պահին գործող կադաստրային արժեքը:

- թիվ 29 (2009թ.) որոշումով Հայաստանի էլեկտրական ցանցեր կազմակերպությանը անհատույց սեփականության իրավունքով տրամադրվել է Տարոն-3, ՔՇՀ-11 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող կիսակառույց ենթակայանը հիմնավորելով թաղամասին անխափան էլեկտրամատակարարումը ապահովելու նպատակով, որը էլեկտրական ցանցերի կանոնադրական պարտականությունն է:

- թիվ 75 (2010թ.) որոշումով Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային նվիրաբերվել է Զոր. Անդրանիկի 1-ին նրբանցքի թիվ 20 հասցեում գտնվող գույքը (մարզադաշտը) վերակառուցելու և որպես մարզադաշտ օգտագործելու համար:
- թիվ 3(2011թ.) որոշումով վարձակալության իրավունքով 10 տարի ժամկետով Ա. Հ.-ին վերակառուցելու և արդիականացնելու նպատակով տրամադրվել է Տիգրան Մեծի 20 հասցեում գտնվող ավտոբուսի կանգառը 64.74 մ². սպասարկման հանար անհրաժեշտ հողատարածքով: Որոշումը կայացնելու համար հիմք է ընդունվել ՀՀ Լոռու մարզպետի միջնորդագիրը (23. 11. 2010 թ. թիվ 101/10803 3/3656-10 գրությունը), որը հիմք է տալիս եզրակացնելու, որ այս գործընթացում համայնքի բնակիչները չունեն տարածքներ ձեռք բերելու հավասար հնարավորություններ:
- թիվ 60(2012թ.) որոշումով տվել է համաձայնություն Կ. Դանիելյանի, Ս. Քառյանի Ջ. Ղուկասյանի կողմից հեղինակած ու համայնքի սեփականություն հանդիսացող՝ «Վանաձոր. Պատկերազարդ պատմություն” գիրքը (թվով՝ 500 կտոր գիրք, յուրաքանչյուրի արժեքը՝12000 դրամ), Ալբերտ Իսոյանի հեղինակած ու համայնքի սեփականություն հանդիսացող «Սև գիրք” աշխատությունը թվով 50 կտոր գիրք, յուրաքանչյուրի արժեքը՝ 10000 դրամ նվիրաբերել քաղաքի ուսումնական հաստատություններին, համայնքի ավագանու անդամներին, անհատների, քաղաքի հյուրերին և այլ կազմակերպությունների: Թեև չի նշվում այս գրքերի համայնքային սեփականություն հանդիսանալու հիմքերը, բայց ակնհայտ է, որ համայնքի ղեկավարի կողմից ժամանակին կատարվել է ոչ համայնքի շահերից բխող ծախսեր՝անհամեմատ բարձր գնով ձեռք են բերվել գրքեր, որոնք այսօր պահանջարկ չունեն:

Կիսակառույց շինությունները և բացվածքները օտարվել են ուղղակի վաճառքով, առանց աճուրդի հայտարարման՝ հետևյալ մեխանիզմով. Համայնքի ավագանու որոշումով կիսակառույց շինությունը նախ տրամադրվել է օգտագործման իրավունքով (հիմնականում հինգ տարի ժամկետով), ապա մոտակա նիստերից որևէ մեկով ավագանին համաձայնություն է տվել նրանով ծանրաբեռնված և սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքը ուղղակի վաճառքով օտարել վարձակալին: Օրինակ՝

- Համայնքի ավագանին թիվ 158 (4.12.2008թ.) որոշումով, առանց մրցույթ հայտարարելու, հինգ տարի ժամկետով օգտագործման իրավունքով տրամադրել է Իսահակյան 14 հասցեում գտնվող 632.5 մ² մակերեսով կիսակառույցը: Քսաներկու օր հետո համայնքի ավագանին թիվ 172 որոշումով (26.04.2008թ.) ուղղակի վաճառքով օտարել է տարածքը վարձակալին:
- Նմանատիպ գործառույթ է իրականացրել Չուխաջյան 31 հասեում գտնվող կիսակառույցի նկատմամբ: Համայնքի ավագանու որոշումով կիսակառույցը տրամադրել է օգտագործման իրավունքով, կարճ ժամանակ հետո ուղղակի վաճառքով օտարվել է վարձակալին, իսկ համայնքի ղեկավարի որոշումով էլ օտարվել է այդ կիսակառույցով ծանրաբեռնված, սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ 458 մ² հողամասը:
- Թիվ 6 (03.02.2012թ.) որոշումով տաս տարի ժամկետով օգտագործման իրավունքով տրամադրվել է Վարդանանց 88 հասցեում գտնվող 57.36 մ² մակերեսով տարածքը,

թիվ 24 (29.06.2012 թ.) որոշումով ուղղակի վաճառքով օտարվել է տարածքի վարձակալին:

Առանց աճուրդ հայտարարելու, ուղղակի վաճառքով, օտարվել են տարածքներ.

- թիվ 37 (2010թ.) որոշումով 91.98 մ² մակերեսով տարածք Շինարարների 27/2 հասցեում,
- թիվ 3 (2010թ.) որոշումով 46.9 մ² մակերեսով տարածք Տարոն-2 ՔՇՀ-3, 9 հասցեում,
- թիվ 69 (2011թ.) որոշումով 168.3 մ² մակերեսով տարածք Խորենացի 10 հասցեում,
- թիվ 37 (2010թ.) որոշումով 130.12 մ² մակերեսով տարածք Իսահակյան 25 հասցեում,
- թիվ 40 (2012թ.) որոշումով 64.16 մ² մակերեսով տարածք Գր. Լուսավորիչի 29 հասցեում:

24.07.2009թ.-7.11.2012թ. Վանաձորի կեղտաջրերի մաքրման կիսակառույց կայանի մասին հաստավել է թվով 6 որոշում:

- Թիվ 78 (2009 թ.) որոշումով, հաշվի առնելով, որ կիսակառույցի շինությունները բարոյապես մաշվել են և հետագա օգտագործման համար պիտանի չեն, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ տարածքը պետք է ազատվի նոր ժամանակակից մաքրման կայան կառուցելու նպատակով, համայնքի ավագանին թույլատրել է մաքրման կայանի շինությունները քանդելու և տարածքը մաքրելու նպատակով հայտարարել աճուրդ:
- Կրկնաաճուրդի արդյունքում մաքրման կայանի շինությունները ապամոնտաժելու և տարածքը մաքրելու պայմանով օտարվել են Ա. Սարուխանյանին (համայնքի ղեկավարի որոշում թիվ 1262 (2010թ.) 63 մլն 243 հազ 600 դրամով): Ա. Սարուխանյանը առաջարկել է պահպանել մաքրման կայանի վարչական շենքը և օտարել իրեն: Համայնքի ավագանին թիվ 63 (2012թ.) որոշումով համաձայնել է վարչական շենքի պահպանմանը և օտարմանը, միաժամանակ սեփականության իրավունքով օտարել վարչական շենքի զբաղեցրած, պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 2100 մ² մակերեսով հողամասը:

Փաստորեն մաքրման կայանի օտարումով չի կատարվել այդ տարածքում նոր ժամանակակից մաքրման կայան կառուցելու 2009 թվականի համայնքի ավագանու թիվ 78 որոշման նախապայմանը:

Համայնքի թվով 2 ստորգետնյա անցումները գտնվում են անբարեկարգ վիճակում և չեն շահագործվում: Բարեկարգման և նպատակային օգտագործման նպատակով համայնքի ավագանին որոշումներ է ընդունել այդ տարածքները 10 տարի ժամկետով տրամադրել օգտագործման իրավունքով (համայնքի ավագանու որոշումներ թիվ 12 (2009թ) և թիվ 14 (2009թ): Չորս տարվա ընթացքում որևէ բարեկարգման աշխատանքներ չեն իրականացվել և ստորգետնյա անցումները չեն շահագործվում:

**1.3. Հողամասերը օտարելու և օգտագործման իրավունքով տրամադրելու և փոխանակելու մասին թվով 5 որոշում:**

**1.4. Հողամասերի վարձավճարները և ոչ բնակելի տարածքների սակագները սահմանելու, համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու և**

**օգտագործման իրավունքով տրամադրելու մրցույթ և աճուրդ հայտարարելու մասին թվով 15 որոշում (հիմք՝ ՏԻՄ օրենք հոդ 20 կետ 16):**

Ընդունվել են որոշումներ համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարելու և օգտագործման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթ և աճուրդ հայտարարելու մասին, համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի վարձավճարների և համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների վարձավճարների սակագները հաստատելու մասին:

Համայնքի ավագանին 2011 թվականի փետրվարի 1-ին հաստատել է թիվ 5 որոշումը, որով համայնքի սեփականության հողամասերը օտարելու և օգտագործման իրավունքով տրամադրելու մասին որոշումներ կայացնելու լիազորությունները վերապահել է համայնքի ղեկավարին (ավելի մանրամասը տես՝ քաղաքետի որոշումների մասին բաժնում), աճուրդներ և մրցույթներ անցկացնելու մասին որոշումներ չեն ընդունել:

## 2. Ֆինանսների բնագավառում ընդունված որոշումներ

Ֆինանսների բնագավառում համայնքի ավագանու կողմից ընդունվել է թվով 110 որոշում: Համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի ամենամյա բյուջեի նախագիծը և բյուջեում առաջարկվող փոփոխությունները, տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը:

Կազմակերպվել է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Օրենքով սահմանված կարգով ավագանին միջոցներ է կիրառել տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ:

- Թիվ 40 (2009թ.) որոշումով գույքահարկի գծով կիրառել է արտոնություններ «Վանաձոր – Քիմպրոմ» ՓԲԸ – ի գույքահարկի գծով առաջացած տույժերից պակասեցրել է 7 մլն 797 հազ. դրամ:
- Թիվ 50 (2009թ.) որոշումով գույքահարկի գծով կիրառել է արտոնություններ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի գույքահարկի գծով առաջացած տույժերից պակասեցրել է 4 մլն 417 հազ 966 դրամ:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով նման արտոնություններ սահմանված չեն: Արտոնությունները նախատեսված են հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար: Բացի Հայրենական Մեծ պատերազմի վետերանների (թվով 5 որոշում –ավտոմեքենայի գույքահարկը զիջելու մասին) սոցիալապես անապահով ընտանիքների նկատմամբ գույքահարկի գծով արտոնություններ չեն կիրառվել:

Աղյուսակ 6. Ֆինանսական բնագավառի որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Որոշումներ, համայնքի բյուջեի հաստատման, բյուջեի՝ համայնքի ղեկավարի | 1 | 13 | 22 | 21 | 11 | 68 | 61.8% |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| առաջարկած փոփոխությունների, բյուջեի կատարման մասին եռամսյա հաղորդումների և տարեկան բյուջեի կատարման մասի | | | | | | | |
| 2. Ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործման մասին | 0 | 2 | 6 | 6 | 4 | 18 | 16.4% |
| 3. Համայնքի ղեկավարի վարձատրության չափի մասին | 0 | 1 | 1 | 0 | 0 | 2 | 1.8% |
| 4. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին | 1 | 1 | 1 | 1 | 1 | 5 | 4.5% |
| 5. Համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց գանձվող վճարների մասին | 1 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0.9% |
| 6. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին | 0 | 1 | 1 | 1 | 1 | 4 | 3.6% |
| 7. Գույքահարկից արտոնություններ տալու մասին | 0 | 3 | 7 | 2 | 0 | 12 | 10.9% |
| Ընդամենը | 3 | 21 | 38 | 31 | 17 | 110 | 100% |

**3. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու, համայնքային նշանակության փողոցների, հրապարակների, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման, հուշաքարերի տեղադրմանը համաձայնություն տալու մասին որոշումներ:**

Աղյուսակ 7. Պատվավոր քաղաքացու կոչման, հուշաքարերի և վերանվանումների վերաբերյալ որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Համայնքի պատվավոր քաղաքացի շնորհելու մասին: | 0 | 7 | 1 | 1 | 0 | 9 | 27.3% |
| 2. Համայնքի փողոցների, հրապարակների, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման մասին: | 0 | 1 | 1 | 0 | 2 | 4 | 12.1% |
| 3. Հուշաքարերի և հուշարձանների տեղադրմանը համաձայնություն տալու մասին: | 2 | 7 | 2 | 5 | 4 | 20 | 60.6% |
| Ընդամենը | 2 | 15 | 4 | 6 | 6 | 33 | 100% |

- Համայնքի պատվավոր քաղաքացի շնորհելու մասին-թվով 9 որոշում:
- Համայնքի փողոցների, հրապարակների, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման մասին-թվով 4 որոշում:
- Հուշաքարերի և հուշարձանների տեղադրմանը համաձայնություն տալու մասին-20 որոշում:

**4. Քաղաքաշինության, կոմունալ տնտեսության և հողօգտագործման բնագավառներում համայնքի ավագանին ընդունել է թվով 13 որոշում.**

**4.1. Քաղաքաշինության բնագավառում.**

1) Համայնքի ավագանին որոշում է ընդունել «Վանաձորի թիվ 2 հիվանդանոց» ՓԲԸ մասնաշենքի մասնակի վերանորոգումը համայնքի առաջնահերթ խնդիրների շարքը դասելու և վերանորոգման հարցով ՀՀ սոցիալական հիմնադրամին դիմելու մասին:
2) Համայնքի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանների նկարագրությունը ըստ աշխարհագրական անվանումների շարադրելու մասին որոշում:
3) Համայնքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծման առաջադրանքի նախագծին համաձայնություն տալու մասին որոշում:

**4.2. Կոմունալ տնտեսության բնագավառում.**

– Դադարեցվել են թաղամասային հիմնարկների գործունեությունը:
– Լուծարվել է «Վանաձորի սպասարկում» ՓԲԸ կազմակերպությունը և ստեղծվել է «Վանաձորի սպասարկում» ՀՈԱԿ կազմակերպությունը:
– Տրամադրվել է աղբի տեսակավորման իրավունք: Ընդունվել է որոշում աղբահանության իրականացման կարգի, աղբահանության դրույքաչափերի, աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցի, աղբամանների (կոնտեյներներ) տեղադրման վայրի, դրանց տեսակի և քանակի մասին:

**4.3. Հողօգտագործման բնագավառում.**

Համայնքի ավագանին թվով հինգ որոշումով հաստատել է համայնքի (ամենամյա) հողային հաշվեկշիռը: Համայնքի հողամասերի հաշվառումը և հողային հաշվեկշռի կազմման աշխատանքները համաձայն ՏԻՄ օրենքի (հոդ. 38, 2-րդ մաս կետ 1) համայնքի ղեկավարի կողմից իրականացվող պետության պատվիրակած լիազորություն է: Հողային հաշվեկշիռը հաստատվել է համայնքի ավագանու որոշումով:

## 5. Համայնքի բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերստեղծման, լուծարման, ղեկավարների թեկնածուներին հաստատման և այլ համայնքների հետ համագործակցելու պայմանագրերը հաստատելու, համայնքների միություններ ստեղծելու մասին որոշումներ:

Աղյուսակ 8. Բյուջետային հիմնարկների և համագործակցությունների վերաբերյալ որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածությանը համաձայնություն տալու մասին: | 0 | 6 | 2 | 1 | 2 | 11 | 33.3% |
| 2. Բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման, ստեղծման, միավորման, անվանափոխման և նրանց կանոնադրությունները, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների | 6 | 5 | 2 | 4 | 2 | 19 | 57.6% |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին: | | | | | | | |
| 3. Միջհամայնքային միավորումներ ձևավորելու, այլ համայնքների հետ համագործակցելու մասին: | 0 | 2 | 0 | 0 | 0 | 2 | 6.1% |
| 4. Հանձնաժողովներ ստեղծելու մասին: | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 3.0% |
| Ընդամենը | 6 | 14 | 4 | 5 | 4 | 33 | 100% |

Համայնքի բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերահաստատման, լուծարման, ղեկավարների թեկնածուներին հաստատման և այլ համայնքների հետ համագործակցելու պայմանագրերը հաստատելու, համայնքների միություններ ստեղծելու մասին թվով 33 որոշում:

Այս բնագավառում համայնքի ավագանին ՏԻՄ օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացման նպատակով հաստատել է որոշումներ.

- Բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածությանը համաձայնություն տալու մասին-11 որոշում:
- Բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման, ստեղծման, միավորման, անվանափոխման և նրանց կանոնադրությունները, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին-19 որոշում:
- Միջհամայնքային միավորումներ ձևավորելու, այլ համայնքների հետ համագործակցելու մասին 2 որոշում:
- Հանձնաժողովներ ստեղծելու մասին 1 որոշում:

**6. Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում ընդունված որոշումներ**

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում համայնքի ավագանին ընդունել է երկու որոշում՝

1) Ուղերձով դիմել է ՀՀ բնապահպանության նախարարին Վանաձոր դենդրոպարկը Ժորա Սարուխանյանի անվամբ անվանակոչելու մասին:
2) Սահմանել է համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները:

## Համայնքի ղեկավարի որոշումների ուսումնասիրություն

Ուսումնասիրվել է համայնքի ղեկավարի որոշումները 21.10.2008թ - 8.11.2012թթ. ժամանակահատվածում: Նշված ժամանակահատվածում ընդունվել է թվով 6902 որոշում, այդ թվում՝ 6810 անհատական և 92 նորմատիվ:

Նկատի ունենալով, որ համայնքի ղեկավարը իրականացրել է ՏԻՄ օրենքով իրեն վերապահված լիազորություններից սահմանափակ թվով լիազորություններ, նպատակահարմար ենք գտել համայնքի ղեկավարի որոշումները դասակարգել ըստ բնագավառների:

Աղյուսակ 9. Համայնքի ղեկավարի որոշումներն ըստ բնագավառի

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Բնակելի տարածքների (բնակարաններ, հանրակացարաններ) օտարումների, օգտագործման իրավունքով տրամադրելու մասին որոշումներ: | 46 | 96 | 85 | 77 | 54 | 358 | 5.20% |
| 2. Ոչ բնակելի տարածքների և գույքի օտարման ու օգտագործման իրավունքով տրամադրելու մասին որոշումներ: | 2 | 1 | 5 | 2 | 4 | 14 | 0.20% |
| 3. Հողհատկացումների (անհատական բնակարանաշինության, հասարակական սպասարկման օբյեկտների, ավտոտնակների, արտադրական նշանակության օբյեկտների կառուցապատման նպատակով) մասին որոշումներ: Վարձակալության պայմանագրերի ժամկետները երկարացնելու մասին որոշումներ: | 159 | 485 | 640 | 268 | 178 | 1730 | 25.10% |
| 4. Ինքնակամ տեղադրված, համայնքի սեփականություն համարվող շինությունների և նրանց ամրակցված հողամասերի տրամադրման, հողհատկացման հիմքերը վերանայելու և վերահատկացնելու, ինքնակամ կառույցների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, և անշարժ գույքի փոստային հասցե տրամադրելու, գույքի միավորների տարանջատման և միավորման մասին որոշումներ: | 75 | 386 | 575 | 1285 | 581 | 2902 | 42.00% |
| 5. Բնակելի և ոչ բնակելի տարածքների գործառնական նշանակությունը փոխելու մասին որոշումներ: | 8 | 34 | 33 | 22 | 20 | 117 | 1.70% |
| 6. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի և վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշումներ: | 25 | 118 | 123 | 106 | 71 | 443 | 6.40% |
| 7. Քաղաքապետարանի գործունեությանը առնչվող | 12 | 34 | 22 | 15 | 23 | 106 | 1.50% |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| խնդիրների մասին, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշումներ: | | | | | | | |
| 8. Ֆինանսների բնագավառի և բյուջեում առաջարկվող փոփոխությունների մասին որոշումներ: | 7 | 13 | 22 | 19 | 13 | 74 | 1.10% |
| 9. Քաղաքաշինության բնագավառում ընդունված որոշումներ: | 3 | 3 | 4 | 6 | 2 | 18 | 0.30% |
| 10. Տրանսպորտի բնագավառում ընդունված որոշումներ: | 1 | 9 | 14 | 36 | 8 | 68 | 1.00% |
| 11. Առևտրի և սպասարկման բնագավառում ընդունված որոշումներ: | 2 | 0 | 0 | 0 | 0 | 2 | 0.00% |
| 12. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում ընդունված որոշումներ: | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0.00% |
| 13. Հասարակական միջոցառումների, ընտրությունների կազմակերպման մասին որոշումներ: | 0 | 4 | 4 | 1 | 20 | 29 | 0.40% |
| 14. Գույքահարկի և հողի հարկի պարտքերը, տեղական տուրքերի պարտքերը և ավել վճարված նպաստները դատական կարգով գանձելու մասին որոշումներ: | 0 | 22 | 17 | 4 | 8 | 51 | 0.70% |
| 15. Համայնքի ղեկավարի որոշումներումփոփոխություն կատարելու մասին որոշումներ: | 31 | 133 | 165 | 425 | 224 | 978 | 14.20% |
| 16. Այլ բնագավառներում ընդունված որոշումներ | 0 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 0.00% |
| Չտրամադրված որոշումներ | 0 | 1 | 2 | 1 | 5 | 9 | 0.10% |
| Գաղտնի | | | | | 1 | 1 | 0.00% |
| Ընդամենը | 371 | 1340 | 1711 | 2267 | 1213 | 6902 | 100.00% |

Տեղական նշանակության հարցերի լուծման ուղղությամբ բնակչության ինքնուրույն և պատասխանատու գործունեության արդյունավետությունը կախված է իրավական նորմերում ամրագրվող ՏԻՄ–երի լիազորությունների կատարման մակարդակից: Լիազորություններն ըստ էության տեղական նշանակության հարցերի լուծման համար անհրաժեշտ օրենսդրությամբ սահմանված իրավունքների և պարտականությունների ամբողջությունն են և ՏԻՄ-երի կողմից իրենց տրված իրավունքների չօգտագործումը նշանակում է սեփական գործառույթների կատարումից հրաժարում ու դրանց փոխանցում այլ մարմինների: Տեղական նշանակության խնդիրների լուծման հարցում ՏԻՄ-երի

անգործությունը կարող է հանգեցնել տեղական ինքնակառավարման համակարգի գործառութային գործունեության խախտման:

ՏԻՄ–երի լիազորությունների դասակարգումը կարող է իրականացվել ըստ տարբեր չափանիշների: Դրանցից հիմնականը ՏԻՄ-երի գործունեության ուղղվածությունն է տեղական նշանակության հարցերի լուծմանը:

Սահմանափակ ֆինանսական միջոցները հնարավորություն չեն տալիս համայնքին միաժամանակյա լուծումներ տալ բազմաթիվ հիմնախնդիրների, որոնք հիմնականում կապված են համայնքի ենթակառուցվածքների թերզարգացվածության հետ, ուստի կարևորվում է համայնքի հիմնախնդիրների առաջնահերթության սկզբունքը, որը ենթադրում է մարդկանց կարիքների գնահատում: Մեր գրավոր հարցման արդյունքում պարզել ենք, որ համայնքի ղեկավարի կողմից կարիքի գնահատում չի կատարվում և դասակարգված չեն համայնքի հիմնախնդիրները:

ՏԻՄ–երի լիազորությունները ստորաբաժանվում են սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների: Սեփական լիազորություններն իրենց հերթին ստորաբաժանվում են պարտադիր և կամավոր լիազորությունների: Պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունները ենթակա են պարտադիր ֆինանսավորման և կատարման:

Աղյուսակ 10. ՀՀ ՏԻՄ-երի լիազորությունները ըստ օրենքով սահմանված առանձին տեսակների և բնագավառների (ՏԻՄ օրենք)

| Բնագավառներ | Պարտադիր Լիազորու-թյուններ | Պետության Պատվիրակած լիազորություններ | Կամավոր Լիազորություններ |
|---|---|---|---|
| 1. Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն | 7 | 6 | 0 |
| 2. Ֆինանսներ | 6 | 0 | 0 |
| 3. Հասարակական կարգի պահպանություն | 0 | 2 | 0 |
| 4. Պաշտպանության կազմակերպում | 3 | 0 | 3 |
| 5. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | 17 | 0 | 5 |
| 6. Հողօգտագործում | 4 | 3 | 2 |
| 7. Տրանսպորտ | 4 | 1 | 1 |
| 8. Առևտուր և սպասարկում | 8 | 0 | 0 |
| 9. Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ | 1 | 1 | 5 |
| 10. Առողջապահություն ֆիզիկական կուլտուրա և սպորտ | 1 | 0 | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| 11. Աշխատանք և սոցիալական ծառայություններ | 0 | 1 | 2 |
| 12. Գյուղատնտեսություն | 2 | 2 | 2 |
| 13. Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն | 1 | 2 | 0 |
| 14. Քաղ.պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ | 1 | 2 | 0 |
| Ընդամենը | 55 | 20 | 23 |

ՏԻՄ–երի որոշումներով այդ լիազորությունների կատարումը ըստ բնագավառների ունի հետևյալ պատկերը.

Աղյուսակ 11. Վանաձոր համայնքի ՏԻՄ-ի փաստացի կիրառած լիազորություններն ըստ բնագավառների

| Բնագավառներ | Պարտադիր Լիազորու-թյուններ | Պետության Պատվիրակած լիազորություններ | Կամավոր Լիազորություններ |
|---|---|---|---|
| 1. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն | 1 | 2 | 0 |
| 2. Ֆինանսներ | 4 | 0 | 0 |
| 3. Հասարակական կարգի պահպանություն | 0 | 1 | 0 |
| 4. Պաշտպանության կազմակերպում | 0 | 0 | 0 |
| 5. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | 8 | 0 | 0 |
| 6. Հողօգտագործում | 2 | 1 | 0 |
| 7. Տրանսպորտ | 2 | 0 | 0 |
| 8. Առևտուր և սպասարկում | 2 | 0 | 0 |
| 9. Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ | 0 | 0 | 0 |
| 10. Առողջապահություն ֆիզիկական կուլտուրա և սպորտ | 0 | 0 | 0 |
| 11. Աշխատանք և սոցիալական ծառայություններ | 0 | 0 | 1 |
| 12. Գյուղատնտեսություն | 0 | 0 | 0 |
| 13. Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն | 0 | 0 | 0 |
| 14. Քաղ.պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ | 0 | 0 | 0 |
| Ընդամենը | 18 | 4 | 1 |

**Պարտադիր լիազորությունների** իրականացման մասին հաստատվել է թվով 6448 որոշում, այդ թվում.

- Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում (ՏԻՄ օրենք հոդ. 33) համայնքի ղեկավարը հաստատել է թվով 23 որոշում (ՏԻՄ օրենք, հոդ. 33, 1-ին մաս, կետ 6 - «Կանոնակարգում է հանրահավաքների, երթերի, ցույցերի և զանգվածային միջոցառումների անցկացումը») -1 լիազորություն:
- Ֆինանսների բնագավառում կայացվել է թվով 74 որոշում (ՏԻՄ օրենք, հոդ 34) - 4 լիազորություն:
- Հասարակական կարգի պահպանության բնագավառում (ՏԻՄ օրենք հոդ. 35)՝ նախատեսված չէ պարտադիր լիազորությունների կատարում:
- Պաշտպանության կազմակերպման բնագավառում (ՏԻՄ օրենք հոդ. 36) –օրենքով նախատեսված է իրականացնել թվով 3 պետության պատվիրակած և թվով 3 կամավոր լիազորություն: Համայնքի ղեկավարի կողմից հաստատված որոշումները չեն առնչվում այս բնագավառին և խնդիրների լուծմանն ուղղված որոշում չի ընդունվել:
- Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսության բնագավառում (ՏԻՄ օրենք հոդ. 37) օրենքով նախատեսված է իրականացնել թվով 17 պարտադիր լիազորություն: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է թվով 18 որոշում (հիմք՝ՏԻՄ օրենք հոդ.37 կետ 4, կետ 5, կետ 7, կետ 8, կետ 11 և կետ 13) - 6 լիազորություն: Իսկ ինքնակամ շինությունների օրինականացման հետ կապված այս բնագավառում համայնքի ղեկավարի կողմից հաստատվել է թվով 2495 որոշում (ՏԻՄ օրենք հոդ. 37 կետ 5- թվով 1562 որոշում և ՏԻՄ օրենք հոդ. 37 կետ 7- թվով 933 որոշում) - 2 լիազորություն:
- Հողօգտագործման բնագավառում (ՏԻՄ օրենք հոդ. 38) օրենքով նախատեսնված է իրականացնել թվով 4 պարտադիր լիազորություն: Համայնքի ղեկավարի կողմից հաստատվել է թվով 2114 որոշում, այդ թվում: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է թվով 1726 որոշում հողհատկացումների վերաբերյալ (ՏԻՄ օրենք հոդ.38 կետ 2): Իսկ ինքնակամ շինությունների օրինականացման հետ կապված այս բնագավառում հաստատվել է թվով 388 որոշում (ՏԻՄ օրենք հոդ. 38 կետ 4) - 2 լիազորություն:
- Տրանսպորտի բնագավառում (ՏԻՄ օրենք հոդ. 39) օրենքով նախատեսնված է իրականացնել թվով 4 պարտադիր լիազորություն: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է թվով 69 որոշում (ՏԻՄ օրենք հոդ 39 կետ 2 թվով 64 որոշում և հոդ 39 կետ. 3 թվով 5 որոշում) - 2 լիազորություն:
- Առևտրի և սպասարկման բնագավառում ընդունված որոշումները (հիմք՝ՏԻՄ օրենք հոդ. 40 կետ 3) թվով 2-ն են - 2 լիազորություն:

Համայնքի ղեկավարի կողմից օրենքով նախատեսված պարտադիր լիազորությունների իրականացման մասին այլ որոշումներ չեն ընդունվել:

**Պետության կողմից պատվիրակած լիազորությունների** իրականացման մասին հաստատվել է թվով 454 որոշում, այդ թվում.

- Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում (ՏԻՄ օրենք հոդ. 33) թվով 251 որոշում (ՏԻՄ օրենք հոդ.33, 2-րդ մաս, 2-1 կետով սահմանել է խնամակալություն, հոգաբարձություն և իրականացրել է խնամակալության ու հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ և թվով 6 որոշում –հոդ.33, 2-րդ մաս կետ 2):
- Հասարակական կարգի պահպանության բնագավառում թվով 198 որոշում (ՏԻՄ օրենք, հոդ 35 կետ 2- վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ):
- Հողօգտագործման բնագավառում թվով 5 որոշում (ՏԻՄ օրենք հոդ. 38 կետ 2- թվով 5 որոշում համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին՝ հաստատվել է համայնքի ավագանու կողմից, որը նույն օրենքով սահմանված է, որպես համայնքի ղեկավարի լիազորություն):

**Համայնքի ղեկավարի կողմից օրենքով նախատեսնված կամավոր լիազորությունների մասին** ընդունվել է թվով 1 որոշում (աշխատանքի և սոցիալական ծառայուրյան բնագավառում- հիմք ՏԻՄ օրենք հոդ. 43 կետ 2)- 1 լիազորություն:

Այսպիսով համայնքի ղեկավարի կողմից իրականացվել են.

- Թվով 4 պետության պատվիրակած լիազորություն (սահմանված է թվով 20 լիազորություն):
- Թվով 18 պարտադիր լիազորություն (սահմանված է թվով 55 լիազորություն):
- Թվով 1 կամավոր լիազորություն (սահմանված է թվով 23 լիազորություն):

## 1. Բնակելի տարածքների (բնակարաններ, հանրակացարաններ) օտարումների, օգտագործման իրավունքով տրամադրման մասին որոշումներ

Ուսումնասիրված ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից օտարվել և օգտագործման իրավունքով տրամադրվել են թվով 358 բնակարաններ և բնակելի տարածքներ:

Աղյուսակ թիվ 12. Բնակելի տարածքների օգտագործման և օտարման վերաբերյալ որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Բնակարանի օտարում | 42 | 80 | 75 | 59 | 45 | 301 | 84.1% |
| 2. Բնակարանի սեփականաշնորհում: | 1 | 1 | 0 | 0 | 0 | 2 | 0.6% |
| 3. Երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած ընտանիքներին բնակարանի հատկացում: | 1 | 2 | 0 | 0 | 0 | 3 | 0.8% |
| 4. Բնակմակերեսի (հանրակացարանի) հատկացում | 1 | 10 | 7 | 13 | 8 | 39 | 10.9% |
| 5. Զոհված ազատամարտիկի ընտանիքներին բնակարանի հատկացում: | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0.3% |
| 6. Փախստականի ընտանիքներին բն | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0.3% |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| բնակարանի հատկացում: | | | | | | | |
| 7. Բնակելի տարածքների օտարում (Բուլղարական տնակներ) | 0 | 1 | 3 | 3 | 1 | 8 | 2.2% |
| 8. Բնակարանի հատկացում | 1 | 0 | 0 | 2 | 0 | 4 | 1.1% |
| Ընդամենը | 46 | 96 | 85 | 77 | 54 | 358 | 100% |

Օտարվել է թվով 301 բնակարան, որոնք հատկացվել են այդ բնակարանների վարձակալներին: Սեփականաշնորհվել է թվով 2 բնակարան և 3 բնակարան հատկացվել է երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած ընտանիքների:

Համաձայն ՀՀ Կառավարության «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում վերականգնման ենթակա տարածքների ոչ հիմնական շինություններում բնակվող, ոչ աղետի (երկրաշարժի) հետևանքով անօթևան մնացած, մշտական բնակության վայր չունեցող քաղաքացիներին բնակտարածությամբ ապահովելու և վերաբնակեցնելու կարգը հաստատելու մասին» 2002 թվականի թիվ 317 որոշման թվով 39 ընտանիքի հատկացվել է բնակելի մակերես (հանրակացարան):

Համայնքի ղեկավարի որոշումներից պարզ չէ, թե ինչ հիմքերով են կատարվում բնակելի մակերեսների հատկացումները, քանի որ քաղաքապետարանը չունի ոչ երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած բնակարանի կարիք ունեցող ընտանիքների հերթացուցակ: Մեկ բնակարան հատկացվել է (օգտագործման իրավունքով) 1988-1992 թթ. Ադրբեջանից բռնագաղթված և ՀՀ քաղաքացիություն ստացած ընտանիքի (հիմք՝ «1988-1992թթ. Ադրբեջանի հանրապետությունից բռնագաղթված և ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» ՀՀ օրենք): Մեկ բնակարան (օգտագործման իրավունքով) - զոհված ազատամարտիկի ընտանիքի (հիմք՝ ՀՀ Նախագահի 12.04.2002 թ. ՀՀԱ-13 հանձնարարականը, ՀՀ Պաշտպանության Նախարարի 27.06.2002թ., ՊՆ/510-293 գրությունը, ՏԻՄ օրենք հոդ. 37 կետ 7):

Այս կարգավիճակն ունեցող ընտանիքներին բնակարանով ապահովելու խնդիրը լուծվում են պետական ծրագրերով և խնդիրը համայնքի ղեկավարի կողմից լուծելու մասին որոշումները իրավական հիմքեր չունեն: Հաշվի առնելով, որ համայնքում այս կարգավիճակով այլ ընտանիքներ նույնպես կան՝ կարծում ենք, որ նմանատիպ արտոնությունները պետք է սահմանվեն ոչ թե միջնորդություններով այլ իրավական ակտերով, որպեսզի խտրականության կամ կամայականության հիմք չդառնան:

Համայնքի ղեկավարի որոշումներով անհատույց օտարվել են թվով 8 բնակելի տարածքներ (Բուլղարական թաղամասում) և ուղղակի վաճառքով օտարվել են դրանց պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը: Բնակելի տարածքները օտարվել են նախկին վարձակալներին (հիմք՝ համայնքի ավագանու 2003 թվականի թիվ 106 որոշում, «ՀՀ հողային օրենսգիրք» Հոդ. 62, հոդ. 66 և հոդ. 87):

Համայնքի ղեկավարի կողմից հաստատված թվով 2 որոշումով սեփականության իրավունքով հատկացվել է 3 բնակարան: Հիմք ընդունելով ֆիզկուլտուրայի և սպորտի, մշակույթի և կրթության բաժինների զեկուցագրերը համայնքի ավագանու թիվ 104 (2007թ.) որոշման մեջ կատարվել է փոփոխություն և համայնքի ավագանու թիվ 4 (2011թ.) որոշումով քաղաքացի Գ. Մ.-ի և Ա. Զ.-ի ընտանիքներին հատկացվել են 2 սենյականոց

բնակարաններ: Այս որոշումը նույնպես իրավական հիմքեր չունի: Ոչ աղետի (երկաշարժի) հետևանքով բնակարանի կարիք ունեցող քաղաքացիների հերթացուցակի և արտոնությունների կարգի բացակայության պայմաններում քաղաքացիներին միջնորդություններով բնակարան հատկացնելու մասին որոշումները հիմնավորված չեն իրավական ակտերով: Երկու որոշումով հաստատվել է Տարոն 3 թաղամասում կառուցված, համայնքի բաժնեմաս համարվող թվով 15 ընտանիքների սեփականության իրավունքով բնակարաններ հատկացնելու ցանկը (հիմք՝ համայնքի ավագանու թիվ 34 (2011թ.) որոշում, ՏԻՄ օրենք հոդ. 37 կետ 7) և Տարոն 2, ՔՇՀ-7 թիվ 36 և 37 շենքերի բնակարանները ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներն հատկացնելու ցանկը (հիմք՝ համայնքի ավագանու թիվ 4 (2011թ.) և թիվ 104 (2007թ. որոշումները), ՏԻՄ օրենք հոդ. 37 կետ 7):

## 2. Ոչ բնակելի տարածքների և գույքի օտարման ու օգտագործման իրավունքով տրամադրման մասին որոշումներ:

Համայնքի ղեկավարը հաստատել է թվով 14 որոշում ոչ բնակելի տարածքների և գույքի օտարման և օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

Աղյուսակ 13. Ոչ բնակելի տարածքների օտարման և օգտագործման վերաբերյալ որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Կիսակառույց շինությունների օտարման մասին: | 2 | 0 | 0 | 0 | 1 | 3 | 21.4% |
| 2. Ավտոբուսի կանգառը օգտագործման իրավունքով տրամադրման մասին: | 0 | 0 | 1 | 0 | 0 | 1 | 7.1% |
| 3. Շինությունը ապամոնտաժելու և քանդելելու նպատակով օտարելու մասին | 0 | 0 | 2 | 0 | 0 | 2 | 14.3% |
| 4. Ոչ բնակելի տարածքի օտարման մասին: | 0 | 0 | 0 | 2 | 1 | 3 | 21.4% |
| 5. Լուսավորության հենասյուների օտարման մասին: | 0 | 0 | 0 | 0 | 2 | 2 | 14.3% |
| 6. Գույք օտարելու և տրամադրելու մասին: | 0 | 1 | 2 | 0 | 0 | 3 | 21.4% |
| Ընդամենը | 2 | 1 | 5 | 2 | 4 | 14 | 100% |

- Օտարվել և օգտագործման իրավունքով տրամադրվել են, թվով 3 կիսակառույց շինություններ (ՏԻՄ օրենք հոդ. 32 կետ 12, «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» հոդ. 188)
- Տարոն-4 39-ա կիսակառույց շինությունը (300քառ. մ), հիմք ընդունելով համայնքի ավագանու թիվ 115 (2008թ) որոշումը և քաղաքապետարանի աճուրդային և մրցութային հանձնաժողովի արձանագրությունը:
- Չուխաջյան 31 տարածքում 458 քառ. մ մակերեսով տարածքը (հիմք՝ համայնքի ավագանու թիվ 115 (2008թ) որոշումը և քաղաքապետարանի աճուրդային և մրցութային հանձնաժողովի արձանագրությունը):
- Տիգրան Մեծի թիվ 26 շենքի պատին կից կիսակառույցը (հիմք՝ դատարանի վճիռ, ՀՀ քաղ. օրենսգիրք հոդ. 188, ՀՀ Կառավարության որոշում թիվ 912 (2006թ.):

- Օգտագործման իրավունքով տրամադրվել է 1 ավտոբուսի կանգառ (ՏԻՄ օրենք հոդ. 32 կետ 12, «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» հոդ. 188).
- Օգտագործման իրավունքով տրամադրվել է Կ.Դեմիրճյան թիվ 2 հասցեում գտնվող ավտոբուսի կանգառը (հիմք՝ համայնքի ավագանու որոշում թիվ 6 (2010թ), ՀՀ հողային օրենսգիրք հոդ. 60 և հոդ. 76):

Համայնքի սեփականություն հանդիսացող շինությունները ապամոնտաժելու և քանդելու նպատակով տրվել է 2 թույլատվություն (հիմք՝ ՏԻՄ օրենք հոդ. 32 կետ 12, «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» հոդ. 188).

- Ապամոնտաժելու և քանդելու նպատակով օտարել է «թիվ 19 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ տնակները (հիմք՝ համայնքի ավագանու որոշում թիվ 15(2010թ.), աճուրդային և մրցութային հանձնաժողովի արձանագրություն) և Հայորդաց տան տնակները (հիմք՝ համայնքի ավագանու որոշում թիվ 33 (2010թ.) աճուրդային և մրցութային հանձնաժողովի արձանագրություն):

Օտարվել է թվով 3 ոչ բնակելի տարածք (ՏԻՄ օրենք հոդ 32 կետ 12, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդ. 188).

- Խորենացի փողոցի թիվ 10 հասցեում գտնվող խանութը, ընդամենը 15. 28 քառ. մ (հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդ. 188, ՀՀ Կառավարության որոշում թիվ 912 (2006թ.):
- Մառան - Գր Լուսավորիչի 49/21-1 հասցեում և Տիգրան Մեծի 38/16-1 հասցեում (հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդ. 188, ՀՀ Կառավարության որոշում թիվ 912 (2006թ.):

Տրվել է լուսավորության սյուների ապամոնտաժման (թվով 25 հենասյուն) և հենասյուները օգտագործման տրամադրելու թույլատվություն:

Օգտագործման իրավունքով տրամադրվել է գույք (ՏԻՄ օրենք հոդ. 32 կետ 12, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդ. 188).

- «Վանաձորի աթլետիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիկասն հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» ՀՈԱԿ-ի գույքը օգտագործման իրավունքով տրամադրվել է Եվրոպական տարածաշրջանային ակադեմիային (հիմք՝ Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենք հոդ. 9 և հոդ.14):
- «Շախմատի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի գույքից տրամադրվել է Վանաձորի Ա. Ազարյանի անվ. «Կենտրոն համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ին և «Մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ին:

**3. Հողհատկացումների (անհատական բնակարանաշինության, հասարակական սպասարկման օբյեկտների, ավտոտնակների, արտադրական նշանակության օբյեկտների կառուցապատման նպատակով)**

**մասին որոշումներ: Վարձակալության պայմանագրի ժամկետները երկարացնելու մասին որոշումներ:**

Այս բնագավառում համայնքի ղեկավարի կողմից հաստատվել է թվով 1730 որոշում:

Աղյուսակ 14. Հողահատկացումների մասին որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1.Հողամասերի օտարում: | 85 | 198 | 383 | 187 | 108 | 961 | 55.5% |
| 2.Հողամասերի տրամադրում: | 50 | 171 | 71 | 30 | 39 | 361 | 20.9% |
| 3.Ընդլայնման նպատակով լրացուցիչ հողամասերի օտարում: | 13 | 29 | 14 | 9 | 0 | 65 | 3.8% |
| 4.Համայնքային սեփականության շինությունների (ավտոտնակներ, տաղավարներ) և նրանց ամրակցված հողամասերի օտարում: | 1 | 58 | 43 | 0 | 0 | 102 | 5.9% |
| 5.Հողամասերի վարձակալության պայմանագրերի ժամկետների երկարացում: | 9 | 23 | 115 | 33 | 24 | 204 | 11.8% |
| 6.Աճուրդների և մրցույթների անցկացնան մասին որոշումներ: | 1 | 6 | 14 | 9 | 7 | 37 | 2.1% |
| Ընդամենը | 159 | 485 | 640 | 268 | 178 | 1730 | 100% |

- Հողամասեր օտարելու մասին (հիմք՝ ՀՀ Կառավարության որոշում թիվ 912 (2006թ.), «ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք» հոդ.188) - թվով 961 որոշում
- Հողամասերի տրամադրում (հիմք՝ ՀՀ Կառավարության որոշում թիվ 286 (12. 04. 2001 թ., ՏԻՄ օրենք հոդ. 37 և հոդ. 38) - թվով 351 որոշում
- Ընդլայնման նպատակով լրացուցիչ հողամասերի օտարելու մասին (հիմք՝ՀՀ Կառավարության որոշում թիվ 286 12.04.2001թ., ՏԻՄ օրենք հոդ.37 և հոդ.38)-թվով 65 որոշում
- Համայնքային սեփականության շինությունները (ավտոտնակներ, տաղավարներ) և նրանց վրա ծանրաբեռնված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը օտարելու և օգտագործման իրավունքով տրամադրելու մասին (հիմք՝ «ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք» հոդ.188, ՀՀ Կառավարության որոշում թիվ 912 (18 05 2006 թ) -102 որոշում
- Հողամասերի վարձակալության պայմանագրերի ժամկետների երկարացնելու մասին (հիմք՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» հոդ. 624, ՀՀ Կառավարության որոշում, թիվ 2093 24. 11. 2005թ)-204 որոշում
- Աճուրդների և մրցույթների անցկացման մասին (հիմք՝ «ՀՀ հողային օրենսգիրք» հոդ. 48, հոդ. 48-1, հոդ. 60, ՀՀ Կառավարության որոշում թիվ 286 12. 04.2001թ., ՏԻՄ օրենք հոդ. 37 և հոդ. 38, մինչև համայնքի ավագանու թիվ 5-ն (2011թ.) որոշման հաստատվելը հղում է կատարվել նաև աճուրդների և մրցույթների անցկացնան մասին համայնքի ավագանու որոշումները) –թվով 37 որոշում:

Համաձայն ՏԻՄ օրենքի հոդված 38-ի թիվ 2 կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներին, գոտիավորման այլ փաստաթղթերին, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանված պայմաններով, սահմանված

կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն համարվող հողամասերը: Համայնքի ղեկավարը, շրջանցելով օրենքի պահանջները, 2011 թվականի փետրվարի 1-ին համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել որոշման նախագիծ, որով համայնքի ավագանուն զրկում է ՏԻՄ օրենքով հոդ. (16 կետ 20) համայնքի սեփականություն համարվող գույքն (տվյալ դեպքում հողամասերը) օտարելու և վարձակալության տրամադրելու որոշում կայացնելու լիազորությունից: Ավագանին միաձայն (կողմ-9 դեմ-0 ձեռնպահ-0) քվեարկությամբ հաստատել է որոշումը, համայնքային սեփականության հողամասերը օտարելու և օգտագործման իրավունքով տրամադրելու մասին որոշումներ կայացնելու լիազորությունները վերապահելով համայնքի ղեկավարին:

Հղում կատարելով ՏԻՄ օրենքի թիվ 16 հոդվածի 20-րդ կետի և 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի միջև կարծեցյալ հակասությանը և հակասություն գտնելով ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի թիվ 1-ին և թիվ 2 կետերով սահմանված. «պետական և համայնքային սեփականությանը պատկանող հողամասերի օտարումն իրականացնող լիազոր մարմինը համայնքի վարչական սահմաններում համարվում է համայնքի ղեկակավարը», հաշվի չառնելով, որ այդ լիազորությունները պետք է կատարել այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ համայնքի ավագանին ընդունել է ՀՀ օրենսդրությանը հակասող որոշում: Արդյունքում համայնքի ղեկավարը հողերի աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու մասին ընդունել է թվով 37 որոշում, որոնք չի համաձայնեցրել համայնքի ավագանու հետ: Հատկանշանական է, որ հետագայում, համայնքի ղեկավարը համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացրել հողհատկացումների մասին թվով 7 որոշման նախագիծ (2011թ-ին թիվ 34 և թիվ 70 որոշումները, 2012թ-ին թիվ 3-ն, 30, 50, 51, 63 որոշումները), որոնք հաստատվել են համայնքի ավագանու կողմից: Մյուս կողմից համայնքի ավագանու թիվ 5-ն 2011թ որոշման հաստատվելուց հետո, համայնքի ղեկավարը իր որոշումներով կատարել է հողամասերի օտարումներ և օգտագործման իրավունքով հողամասեր է տրամադրել, հղում կատարելով ՏԻՄ օրենքի 38-րդ հոդվածը, համաձայն որի համայնքային սեփականության հողամասերը օտարվում կամ օգտագործման իրավունքով տրամադրվում են համայնքի ավագանու համաձայնությամբ:

Համեմատության համար դիտարկվել է հանրապետության տարբեր մարզերի մի շարք համայնքներում (Դիլիջան, Եղեգնաձոր, Մարալիկ, Ալավերդի, Արարատ, Ծաղկաձոր և այլն) հողամասերի օտարման և օգտագործման իրավունքով տրամադրման գործընթացը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտարկած բոլոր համայնքներում հողամասերի օտարման և վարձակալությամբ տրամադրման հետ կապված գործընթացները իրականացվում են համայնքի ավագանու համաձայնությամբ: Այսպիսով Վանաձոր համայնքի ավագանին փաստացի չի տիրապետում համայնքային սեփականություն համարվող հողամասերի օտարման գործընթացին:

4. **Ինքնակամ տեղադրված, համայնքի սեփականություն համարվող շինությունների և նրանց ամրակցված հողամասերի տրամադրման, հողհատկացման հիմքերը վերանայելու և վերահատկացնելու, ինքնակամ կառույցների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, և**

**անշարժ գույքի փոստային հասցե տրամադրելու, գույքի միավորների տարանջատման և միավորման մասին որոշումներ:**

Աղյուսակ 15. Ինքնակամ կառույցների վերաբերյալ որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Ինքնակամ կառույցների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և ինքնակամ ձևափոխությունները օրինականացնելու մասին: | 11 | 59 | 255 | 969 | 271 | 1565 | 54.0% |
| 2. Հողհատկացման հիմքերը վերականգնելու և վերահատկացնելու մասին: | 29 | 108 | 78 | 107 | 70 | 392 | 13.5% |
| 3. Նոր փոստային հասցե տրամադրելու մասին: | 5 | 15 | 19 | 74 | 139 | 252 | 8.7% |
| 4. Ինքնակամ կառույցների նկատմամբ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին: | 25 | 164 | 162 | 49 | 32 | 432 | 14.9% |
| 5. Գույքային միավորների տարանջատման և միավորման մասին: | 5 | 41 | 61 | 85 | 69 | 261 | 9.0% |
| Ընդամենը | 75 | 387 | 575 | 1284 | 581 | 2902 | 100% |

–

Այս բնագավառում համայնքի ղեկավարի կողմից հաստատվել է թվով 2902 որոշում:

- Ինքնակամ կառույցների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և ինքնակամ ձևափոխությունները օրինականացնելու մասին հաստատվել է թվով 1565 որոշում (հիմք՝ «ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք» հոդ.188, ՀՀ Կառավարության թիվ 912 (2006թ.) որոշումով հաստատված կարգի թիվ 29 կետ):
- Հողհատկացման հիմքերը վերականգնելու և վերահատկացնելու մասին հաստատվել է թվով 392 որոշում (հիմք՝ ՀՀ Կառավարության որոշում թիվ 286 (12. 04.2001թ.), Կառավարության որոշում թիվ 2331 (09.07.2008թ), «ՀՀ հողային օրենսգիրք» հոդ.64 կետ16, ՏԻՄ օրենք հոդ.38):
- Նոր փոստային հասցե տրամադրելու մասին հաստատվել է թվով 352 որոշում (հիմք՝ ՏԻՄ օրենք հոդ.37, ՀՀ Կառավարության որոշում թիվ 2387-ն (29.12.2005 թ.):
- Ինքնակամ կառույցների նկատմամբ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին հաստատվել է թվով 432 որոշում (հիմք՝ «ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք» հոդ.188, ՀՀ Կառավարության թիվ 912 որոշումով հաստատված կարգի թիվ 29 կետ (18.05.2006 թ.):
- Գույքային միավորների տարանջատման և միավորման մասին հաստատվել է թվով 261 որոշում (հիմք՝ ՀՀ Կառավարության որոշում թիվ 2387-ն (29.12.2005 թ.), ՏԻՄ օրենք հոդ.37 և հոդ.38):

Ժամանակի առումով հնարավորություն չունենալով ուսումնասիրել այս բնագավամ համայնքի ղեկավարի կողմից ընդունած որոշումները ամբողջությամբ՝ կապված որոշումների մեծ քանակի, պահանջվող արխիվային փաստաթղթերի, համայնքի ղեկավարի կողմից նախորդ տարիներին ընդունված որոշումների և այլ փաստաթղթերի

ծավալի և ձեռք բերման դժվարությունների հետ կատարել ենք ընտրանքային ուսումնասիրություն:

Բնագավառում բարձր է կոռուպցիոն ռիսկայնությունը.

1) 2009 թվականի տարեկան գործունեության շրջանակներում ՀՀ Վերահսկիչ Պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել է հողհատկացման հիմքերի վերականգնման և վերահատկացման խախտման դեպքեր, մասնավորապես համայնքի ղեկավարի 28.07.2008թ թիվ 1147 որոշումով Հայաստանի ազգային արխիվի Լոռու Մարզային մասնաճյուղի կողմից տրված թիվ 758 տեղեկանքի հիման վրա վերականգնվել և «Երուկրշին» ՓԲԸ-ին անհատույց սեփականության իրավունքով վերահատկացվել է 3707.0 քառ. մ հողատարածք Բաղրամյան 2/2 հասցեում, հողամասի հետագայում օտարման օրենքով սահմանված դեպքում տվյալ պահին գործող կադաստրային արժեքը վճարելու պայմանով: Նշված թիվ 758 քաղվածքի համաձայն «Երուկրշին» ՓԲԸ-ն ընդհանրապես հողհատկացման հիմքեր չունի: «Երուկրշին» ՓԲԸ-ն իր հերթին ստեղծված լինելով «ՈՒկրշին» ԲԲԸ-ի հիմնադիրների կողմից՝ «ՈՒկրշին» ԲԲԸ-ից ժողովի արձանագրությամբ նվիրատվության ձևով ստացել է 3707.0քառ. մ հող, որը նույնպես պետական գրանցում չի ստացել: Համաձայն «ՀՀ Հողային օրենսգրքի» 64-րդ հոդվածի 9-րդ կետի հողամաս ձեռք բերողը համայնքային բյուջե պետք է վճարի հողհատկացման պահին հողամասի կադաստրային արժեքը, որը տվյալ դեպքում կազմում է 7, 095, 2 հազ. դրամ:
2) Համայնքի ղեկավարի 09.04.2009թ թիվ 287 որոշումով անհատույց սեփականության իրավունքով վերահատկացվել է 14000 քառ մ հողատարածք Գործարանային փողոցի թիվ 13 հասցեում, հողամասի հետագայում օտարման դեպքում տվյալ պահին գործող կադաստրային արժեքը վճարելու պայմանով: Այս դեպքում նույնպես չի կատարվել ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջը:

Համաձայն ՀՀ Հողային օրենսգրքի հոդ. 65 սահմանված կարգի՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետության սեփականություն համարվող հողամասերն անհատույց տրամադրում է համայնքի ղեկավարը՝ ավագանու համաձայնությամբ: Համայնքի ղեկավարը հողամասը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու վերաբերյալ բնակչությանը տեղեկացնում է զանգվածային լրատվության կամ այլ միջոցներով: Առկա դեպքերում համայնքի ղեկավարի կողմից չի ապահովվել հրապարակայնությունը:

## 5. Բնակելի և ոչ բնակելի տարածքների գործառնական նշանակությունը փոխելու մասին որոշումներ:

Աղյուսակ 16. Բնակելի և ոչ բնակելի տարածքների գործառնական նշանակությունը փոխելու մասին որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Բնակարանի գործառնական նշանակությունը փոխելու մասին | 5 | 24 | 19 | 13 | 16 | 77 | 65.8% |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2.Հասարակական և արտադրական նշանակության տարածքները որպես բնակարան փոխելու մասին | 1 | 3 | 6 | 3 | 2 | 15 | 12.8% |
| 3.Ըստ գործունեության նշանակության տարածքների գործառական նշանակությունը փոխելու մասին | 2 | 6 | 6 | 4 | 2 | 20 | 17.1% |
| 4.Հողամասերի գործառնական նշանակությունը փոխելու մասին | 0 | 1 | 2 | 2 | 0 | 5 | 4.3% |
| Ընդամենը | 8 | 34 | 33 | 22 | 20 | 117 | 100% |

Այս բնագավառում համայնքի ղեկավարը ընդունել է թվով 117 որոշում, այդ թվում.

- Բնակարանի գործառնական նշանակությունը փոխելու մասին թվով 77 որոշում:
- Հասարակական և արտադրական նշանակության տարածքները որպես բնակարան փոխելու մասին թվով 15 որոշում:
- Ըստ գործունեության նշանակության տարածքների գործառական նշանակությունը փոխելու մասին թվով 20 որոշում:
- Հողամասերի գործառնական նշանակությունը փոխելու մասին թվով 5 որոշում:

## 6. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի և վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշումներ

Աղյուսակ 17. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի և վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1.Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի | 16 | 58 | 74 | 58 | 39 | 245 | 55.3% |
| 2.վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշումներ | 9 | 60 | 49 | 48 | 32 | 198 | 44.7% |
| Ընդամենը | 25 | 118 | 123 | 106 | 71 | 443 | 100% |

Այս բնագավառում համայնքի ղեկավարը ընդունել է թվով 443 որոշում, այդ թվում.

- Հաստատել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից սահմանված խնամակալություններ, հոգաբարձություններ և խնամակալության ու հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ (հիմք ՏԻՄ օրենք հոդ 33, «ՀՀ ընտանեկան օրենսգիրք»)-թվով 245 որոշում:
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ հաստատվել է թվով 198 որոշում (հիմք՝ ՏԻՄ օրենք հոդ 35, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք): Հիմնականում վարչական պատասխանատվության են ենթարկվել առևտրի համայնքային կանոնները խախտելու, գույքահարկի հաշվետվության ներկայացման ժամկետները խախտելու և բնակելի տարածքներում ինքնակամ ձևափոխություններ կատարելու համար: Բնակելի տարածքներում ինքնակամ ձևափոխություններ և կառուցապատման աշխատանքներ կատարելու դեպքերով հաստատվել է թվով 14 որոշում, մեկ որոշում՝ ապօրինի հողազավթման և կառուցապատման համար:

## 7. Քաղաքապետարանի գործունեությանը առնչվող խնդիրների մասին, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշումներ:

Քաղաքապետարանի գործունեությանը առնչվող խնդիրների մասին համայնքի ղեկավարը հաստատել է թվով 105 որոշում, այդ թվում.

Աղյուսակ 18. Քաղաքապետարանի գործունեության վերաբերյալ որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին: | 2 | 7 | 2 | 2 | 8 | 21 | 20.0% |
| 2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունը և կարգապահական ներքին կանոնները հաստատելու և քաղաքապետարանի շենքում աշխատանքային պայմաններ ապահովելու մասին: | 0 | 7 | 3 | 0 | 0 | 10 | 9.5% |
| 3. Համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելու, հայեցողական պաշտոններում նշանակումներ կատարելու, նրանց լիազորությունները դադարեցնելու, բյուջետային հիմնարկների ղեկավարներին նշանակելու և ազատելու մասին: | 9 | 6 | 4 | 5 | 12 | 36 | 34.3% |
| 4. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով ստեղծելու, թափուր պաշտոնների համար մրցույթ հայտարարելու, համայնքային ծառայության դասային աստիճան շնորհելու, նոր պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին: | 0 | 7 | 4 | 3 | 2 | 16 | 15.2% |
| 5. Համայնքային կազմակերպություններ ստեղծելու և լուծարելու մասին | 1 | 4 | 0 | 0 | 1 | 6 | 5.7% |
| 6. Համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներին համայնքի ղեկավարի անունից հանդես գալու լիազորություններ տալու մասին: | 0 | 3 | 0 | 1 | 0 | 4 | 3.8% |
| 7. Համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներին և համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին պարգևատրելու և | 0 | 0 | 9 | 3 | 0 | 12 | 11.4% |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| նկատողություն հայտարարելու, արտաժամյա աշխատանք կատարելու մասին: | | | | | | | |
| Ընդամենը | 12 | 34 | 22 | 14 | 23 | 105 | 100% |

– Համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին-թվով 21 որոշում (հիմք՝ ՏԻՄ օրենք հոդ 28 հոդ. հոդ. 16-26, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք հոդ. 11, հոդ. 15):

Համայնքի ղեկավարը ահմանված կարգով հաստատելով աշխատակազմի և բյուջետային հիմնարկների ու ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, հետագայում հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի փոփոխությունները չի ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը (տե՛ս 2012 թվականին ընդունված 167, 168, 206, 390, 490, 493 համայնքի ղեկավարի որոշումները, 2009 թվականին՝ թիվ 1179 որոշումը):

– 2009 թվականին համայնքի ղեկավարի թիվ 438 որոշումով հաստատվել է «Հաշվապահ» ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը, որը օրենքով սահմանված կարգով չի ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը:
– Համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունը և կարգապահական ներքին կանոնները հաստատելու և քաղաքապետարանի շենքում աշխատանքային պայմաններ ապահովելու մասին: -թվով 10 որոշում (հիմք՝ ՏԻՄ օրենք հոդ. 32 կետ 3):
– Համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելու, հայեցողական պաշտոններում նշանակումներ կատարելու, նրանց լիազորությունները դադարեցնելու, բյուջետային հիմնարկների ղեկավարներին նշանակելու և ազատելու մասին-թվով 36 որոշում (հիմք՝ ՏԻՄ օրենք հոդ 7, հոդ 28):
– համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով ստեղծելու, թափուր պաշտոնների համար մրցույթ հայտարարելու, համայնքային ծառայության դասային աստիճան շնորհելու, նոր պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին -թվով 16 որոշում (հիմք «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք հոդ. 13, հոդ. 8):
– Համայնքային կազմակերպություններ վերակազմակերպելու ստեղծելու և լուծարելու մասին թվով 6 որոշում (հիմք՝ ՏԻՄ օրենք հոդ 32):

Օրենքով սահմանված կարգով (ՏԻՄ օրենք հոդ. 32 կետ 6)՝ համայնքի ղեկավարը որոշումներ է ընդունում համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին: Համայնքի ղեկավարը այս բնագավառում ընդունել է որոշումներ, որոնք չեն ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը: Մասնավորապես 2009 թվականին թիվ 23 ՆՈՒՀ-ն լուծարելու, թիվ 826 (2009թ) և թիվ 211 (2012թ) որոշումներով մի շարք համայնքային բյուջետային հիմնարկներ վերակազմակերպելու, ինչպես նաև թիվ 3 ՆՈՒՀ ստեղծելու մասին որոշումները:

- Համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներին համայնքի ղեկավարի անունից հանդես գալու լիազորություններ տալու մասին - թվով 4 որոշում (հիմք ՏԻՄ-օրենք հոդ. 32 կետ 17):
- Համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներին և համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին պարգևատրելու և նկատողություն հայտարարելու, արտաժամյա աշխատանք կատարելու մասին - թվով 12 որոշում (հիմք՝ «ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»):

Համաձայն ՏԻՄ օրենքի (հոդ. 28 և հոդ. 16-26) համայնքի ղեկավարը մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում իր աշխատակազմի, ինչպես նաև համայնքային բյուջետային հիմնարկների, առանձնացված ստորաբաժանների կառուցվածքը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը:

Համայնքային ծառայությունը, որպես հանրային ծաառայության ինքնուրույն տեսակ ՀՀ-ում ձևավորվել է 2004 թվականին ընդունված «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ: Օրենքը սահմանում է համայնքային ծառայության հիմնական սկզբունքները և կարգավորում է համայնքային ծառայության կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ: Այս օրենքի ընդունմամբ ՀՀ օրենսդրական դաշտում բավարար հիմքեր ստեղծվեցին համայնքային ծառայության համակարգի արդյունավետ կայացման համար:

Հաշվի առնելով, որ տեղական ինքնակառավարման մարմինների կայացման համար խիստ կարևորվում է համակարգի խնդիրների բնույթը և առանձնահատկությունները բացահայտող և դրանց լուծման գերակայություններն ու ուղղությունները որոշող անձնակազմի առկայությունը՝ տեղական ինքնակառավարումը պահանջում է իր բնույթին համարժեք կադրային ապահովվածություն, որն ունակ լինեն կրելու իշխանության այդ օղակի ողջ պատասխանատվությունը:

Գործող օրենքներով կարգավորված են թափուր պաշտոնների մրցույթներ անցկացնելու, առավել արհեստավարժ կադրերով համայնքի ղեկավարի աշխատակազմը համալրելու խնդիրը, սակայն համայնքային ծառայության համակարգում մեծ են կոռուպցիոն ռիսկերը: Հանրության շրջանում մրցութային հանձնաժողովների գործունեության նկատմամբ առկա է անվստահություն և թերահավատություն մրցույթների միջոցով հաղթող ճանաչվելու և աշխատանքի ընդունվելու գործընթացի նկատմամբ:

Թեև մեր կողմից այս առնչությամբ հատուկ ուսումնասիրություն չի կատարվել, սակայն լրատվական միջոցներով պարբերաբար տարածվող հավաստի տեղեկությունները փաստում են, որ Վանաձոր համայնքի ղեկավարի աշխատակազմը հիմնականում ձևավորվել է մերձավոր ազգակցությամբ կամ ծանոթ-խնամիությամբ կապված անձանցով՝ ինչը ոչ միայն հակասում է «Համայնքային ծառայության մասին» օրենքին այլ նաև հանդիսանում է շահերի բախման և կոռուպցիոն ռիսկերի աղբյուր:

## 8. Ֆինանսների բնագավառում ընդունված որոշումներ

Համայնքի ղեկավարը ընդունել է թվով 74 որոշում

- Կազմել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխությունները և բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյա հաղորդումներ ու տարեկան հաշվետվություն է ներկայացրել համայնքի ավագանուն
- Սահմանել է հարկերի, տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը:
- Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառել է համապատասխան միջոցներ (դիմել է դատարան՝ դատական կարգով գանձելու նպատակով):

**9. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում ընդունված որոշումներ:**

Համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության հիմնական սկզբունքները, քաղաքաշինական գործունեության ու դրա հետ կապված հողօգտագործման հարաբերությունների կարգավորումը սահմանված են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով և այլ օրենսդրական ակտերով:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում համայնքի ղեկավարը ընդունել է թվով 18 որոշում: Միաժամանակ իրականացրել է գործառույթներ կապված ինքնակամ շինությունների և բնակելի ու ոչ բնակելի տարածքներում ինքնակամ ձևափոխությունների օրինականացման գործընթացում, ինչպես նաև կառուցապատողներին ներկայացրել է ճարտարապետահատակագծային առաջադրանքներ և համաձայնեցրել է նախագծերը:

- Գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները կազմակերպելու նպատակով-թվով 2 որոշում:
- Ինքնակամ շինարարությունը կանխարգելելու և կասեցնելու նպատակով-թվով 3 որոշում:
- Տրամադրել է Կիրովի արձանի պատվանդանի քանդման և Մ Մկրտչյանի հուշարձանի տեղադրման թույլատվություն:
- Որոշում է ընդունել ավտոբուսի կանգառի տեղափոխման մասին և հասատել է Տարոն-2 թաղամասում կառուցված շենքի բնակարանները համայնքի քաղաքացիներին հատկացնելու մասին որոշումը:
- Համաձայն ՏԻՄ օրենքի թիվ 37 հոդվածի 8-րդ կետի տվել է արտաքին գովազդ տեղադրելու թույլատվություններ:

Քանի որ համայնքը չունի գլխավոր հատակագիծ և համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներ, այս բնագավառում խնդիրները կարգավորվում են հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները: Այնուամենայնիվ, հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները չեն կանոնակարգում առանձին օբյեկտների տեղադրման և շինարարության, ենթակառուցվածքների և գեղագիտական պահանջմունքների հետ կապված խնդիրները, չեն կարգավորում տարբեր գործառնական նշանակության տարածքների նպատակային օգտագործումը և ըստ այդմ բավարար հիմքեր չեն ստեղծում համայնքի հեռանկարային զարգացման համար:

Մտահոգիչ է նաև, որ համայնքի բնակչությունը, իրազեկված չլինելով միջավայրի քաղաքաշինական փոփոխություններին (որևէ հանրային քննարկում չի իրականացվել), հնարավորություն չունի վերահսկել տարերային բնույթ կրող կառուցապատման աշխատանքները: Գոտիավորման նախագիծը, որպես հրապարակային փաստաթուղթ, որը մատչելի պետք է լինի համայնքի բնակչությանը, հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուր բնակչի իրազեկվել տեղում կատարվող բոլոր գործողություններին, հնարավորություն կտա կանխել տարերային կառուցապատման աշխատանքները:

**10. Տրանսպորտի բնագավառում ընդունված որոշումներ:**

Տրանսպորտի բնագավառում համայնքի ղեկավարը ընդունել է թվով 68 որոշում, այդ թվում.

- Երթուղային գիծը տրանսպորտային միջոցով համալրելու մասին - 1 որոշում
- Մրցույթ անցկացնելու ժամանակացույցը հաստատելու և մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություններին երթուղային գիծը սպասարկելու թույլատվություն տալու մասին - 5 որոշում
- երթուղային գծերում տրանսպորտային միջոցները փոխարինելու թույլատվություն տալու մասին - 63 որոշում:

**11. Առևտրի և սպասարկման բնագավառում ընդունվել է մեկ որոշում, համայնքի տարածքում բացօթյա առևտուրը կազմակերպելու մասին (հիմք՝ ՏԻՄ օրենք հոդ 40 կետ 3):**

**12. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում ընդունվել է մեկ որոշում, անգործունակ Մ. Ս.-ի գույքի նկատմամբ նոտարական հաստատման ենթակա գործարք կատարելու մասին (հիմք՝ ՏԻՄ օրենք հոդ.43 կետ 2):**

**13. Հասարակական միջոցառումների, ընտրությունների կազմակերպման մասին թվով 29 որոշում, այդ թվում.**

Աղյուսակ 19. Հասարակական միջոցառումների և ընտրությունների մասին որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Զանգվածային և հրապարակային միջոցառումներ կազմակերպելու մասին որոշումներ | 0 | 3 | 4 | 1 | 5 | 13 | 44.8% |
| 2. Հանրահավաքներ կազմակերպելու մասին որոշումներ | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 3.5% |
| 3. Ընտրությունների կազմակերպմանն առնչվող որոշումներ | 0 | 0 | 0 | 0 | 6 | 6 | 20.7% |
| 4. Հավաքների կազմակերպումն թույլատրելու մասին որոշումներ | 0 | 0 | 0 | 0 | 9 | 9 | 31% |
| Ընդամենը | 0 | 4 | 4 | 1 | 20 | 29 | 100% |

- Զանգվածային և հրապարակային միջոցառումներ կազմակերպելու մասին - 13 որոշում

- Հանրահավաքներ կազմակերպելու մասին - 1 որոշում: Համայնքի ղեկավարի թիվ 497 (2009թ) որոշումով արգելվել է «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա Վանաձորի գրասենյակ» կազմակերպության կողմից՝ 2009 թ-ի մայիսի 27-ին ժամը 14.00-16.00 Վանաձոր քաղաքի «Արցախ» պուրակում կազմակերպվող հանրահավաքը, հիմք ընդունելով ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության 2009 թ-ի մայիսի 25-ի թիվ 70/1-1609 պաշտոնական եզրակացությունը և 26.05.2009թ-ին Վանաձորի քաղաքապետարանում կազմակերպված իրազեկման քննարկման արձանագրությունը, ղեկավարվելով «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը:
- Ընտրությունների կազմակերպմանն առնչվող թվով 6 որոշում:
- Հավաքների կազմակերպումն թույլատրելու մասին թվով 9 որոշում:

## 14. Գույքահարկի և հողի հարկի պարտքերը, տեղական տուրքերի պարտքերը և ավել վճարված նպաստները դատական կարգով գանձելու մասին որոշումներ

Աղյուսակ 20. Հարկերի և տուրքերի դատական կարգով գանձման վերաբերյալ որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Գույքահարկի և հողի հարկի պարտքերը դատական կարգով գանձելու մասին որոշումներ: | 0 | 22 | 14 | 2 | 5 | 43 | 84.3% |
| 2. Տեղական տուրքերի պարտքերը դատական կարգով գանձելու մասին որոշումներ: | 0 | 0 | 0 | 1 | 2 | 3 | 5.9% |
| 3. Ավել վճարված նպաստները դատական կարգով ետ գանձելու մասին որոշումներ: | 0 | 0 | 3 | 1 | 1 | 5 | 9.8% |
| Ընդամենը | 0 | 22 | 17 | 4 | 8 | 51 | 100% |

Այս բնագավառում համայնքի ղեկավարն հաստատել է թվով 43 որոշում (հիմք ՏԻՄ օրենք հոդ. 34 կետ 2-22), այդ թվում.

- Գույքահարկի և հողի հարկի պարտքերը դատական կարգով գանձելու մասին - 43 որոշում
- Տեղական տուրքերի պարտքերը դատական կարգով գանձելու մասին - 3 որոշում
- Ավել վճարված նպաստները դատական կարգով ետ գանձելու մասին թվով 5 որոշում
- Թիվ 128 (2012 թ) որոշումով ստեղծել է հանձնաժողով արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասի գնահատման մասին (հիմք՝ ՀՀ Կառավարության թիվ 1582 (2011թ.):

## 15. Համայնքի ղեկավարի որոշումներում փոփոխություն կատարելու մասին որոշումներ:

Համայնքի ղեկավարը չորս տարվա ընթացքում իր կողմից հաստատված որոշումներում կատարել է թվով 978 փոփոխություն, որոնք կազմում են հստատված որոշումների ընդհանուր թվի 14. 7 %:

Աղյուսակ 21. Համայնքի ղեկավարի որոշումներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումներ

| Որոշումներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | Ընդ. | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Վրիպակների պատճառով կատարված փոփոխություններ | 21 | 51 | 73 | 83 | 66 | 294 | 30.1% |
| 2. Բովանդակային փոփոխություններ | 4 | 40 | 75 | 328 | 149 | 596 | 60.9% |
| 3. ՈՒԺը կորցրած ճանաչելու մասին որոշումներ | 6 | 42 | 17 | 14 | 9 | 88 | 9.0% |
| Ընդամենը | 31 | 133 | 165 | 425 | 224 | 978 | 100% |

Փոփոխությունները հիմնականում կատարվել են վրիպակների պատճառով (30%), որոնք բովանդակային նշանակություն չունեն: Թվով 596 որոշումով (61%) փոփոխվել են նախկինում ընդունված որոշումների բովանդակությունը, որոնք հիմնականում ինքնակամ շինությունների օրինականացման և հողհատկացման հիմքերը վերականգնելու ժամանակ ոչ ճիշտ չափագրումների արդյունք են: Նմանատիպ պատճառներով փոփոխությունների բարձր ցուցանիշը վկայում է անփութության կամ աշխատակազմի ցածր մասնագիտական մակարդակի մասին, որը թեևս աշխատակիցների ոչ մրցակցային ընտրության հետևանք է:

Այս ամենի հետ նպատակահարմար ենք գտնում նշել, որ որոշումների ձևակերպումները հստակ պարզաբանումներ չեն տալիս և որոշ դեպքերում անհասկանալի են մնում կատարված փոփոխությունների պատճառները: Օրինակ՝ հիմք ընդունելով Հայաստանի ազգային արխիվի Լոռու մասնաճյուղի կողմից տրամադրած թիվ 39 (2008թ.) քաղվածքը, Կ. Դեմիրճյանի 2-րդ նրբանցքի թիվ 10 հասցեում անհատույց տրամադրվել է 404. 3 քառ. մ. հողատարածք և թիվ 56 (2009թ.) որոշումով առանց նշելու պատճառները նախորդ որոշման մեջ փոփոխություն է կատարվել հողամասի չափը դարձնելով 564. 7 քառ.մ.:

# 2. Վանաձոր համայնքի 2008-2012 թթ. բյուջեի ուսումնասիրություն

Հայաստանում տեղական ինքնակառավարման ներդրումից ի վեր տեղական ինքնակառավարմանը վերապահվել են լիազորություններ, որոնց շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինները պետք է սեփական պատասխանատվությամբ լուծեն տեղական խնդիրները: Իրենց գործունեություն իրականացնելու համար տեղական ինքնակառավարման մարմիններին վերագրվել են նաև ֆինանսական մուտքեր, որոնց միջոցով պետք է իրականացվեն ծառայությունների մատուցումը տեղական մակարդակում: Համաձայն Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի (Հոդված 9) տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված ֆինանսական միջոցները պետք է համապատասխանեն օրենքներով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններին: Այդ լիազորությունների իրականացման համար օրենքով պետք է հաստատվեն լիազորությունների իրականացման կարգեր (ՀՀ Սահմանադրության, Հոդված 107), սակայն մինչ այժմ նման կարգեր չեն հաստատվել: Սահմանված կարգերի բացակայությունը էական խոչընդոտ է հանդիսանում տեղական ինքնակառավարման գործունեության գնահատման համար, քանի որ չկան իրական սահմանված նորմեր կամ չափանիշներ լիազորությունների իրականացման վերաբերյալ: Նշված պարագայում ՏԻՄ գործունեության գնահատման տարբերակ է ցուցանիշների հիման վրա կատարված գնահատումը: Այս նպատակով տվյալ հետազոտությունն իրականացնելու համար առանձնացվել են հետևյալ ցուցանիշները.

<u>Եկամտային մաս</u>

- Բյուջետային եկամուտների բացարձակ մեծությունները,
- Եկամուտների աճի տեմպը
- Առանձին բյուջետային եկամտատեսակների (հարկեր, տուրքեր, վճարներ և այլն), տեսակարար կշիռները ընդհանուր եկամուտների մեջ
- Եկամուտների հավաքագրման ցուցանիշները
- Համայնքի ապառքները
- Մեկ շնչին ընկնող եկամուտը

<u>Ծախսային մաս</u>

- Բյուջետային ծախսերի բացարձակ մեծությունները,
- Բյուջետային ծախսերի աճի տեմպը
- Առանձին գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ ծախսերի բացարձակ մեծությունները և տեսակարար կշիռները
- Բյուջեի կատարողականները, ըստ տարիների
- Մեկ շնչին ընկնող ծախսերի/ծառայությունների ծավալը

Ցուցանիշների հետ զուգահեռ ՏԻՄ մարմինների գնահատման նպատակով կատարվել է համայնքի քառամյա զարգացման ծրագրով սահմանված նպատակների իրականացման և նախանշված ֆինանսական ցուցանիշների և վերը նշված ցուցանիշների համապատասխանության գնահատում:

## Եկամուտների վերլուծություն

2008-2012 թթ. Վանաձոր համայնքի բյուջետային եկամուտները դիտարկվել են ըստ ճշտված պլանային և փաստացի ցուցանիշների: Համապատասխանաբար 2008թ. համար սահմանվել է 1,357,230 հազար դրամ (փաստացի կատարվել՝ 1,330,485 հազար դրամ), 2009թ. համար սահմանվել է 1,725,780 հազար դրամ (փաստացին՝ 1,639,801 հազար դրամ), 2010թ. համար՝ 1,830,930 հազար դրամ (փաստացին՝ 1,785,345), 2010թ.՝ 2,062,162 հազար դրամ (փաստացի կատարվել է՝ 1,808,944 հազար դրամ), 2011թ.՝ 1,842,754 հազար դրամ (փաստացին՝ 1,790,550 հազար դրամ), 2012թ.՝ 1,849,472 հազար դրամ (կատարվել է՝ 2,025,952 հազար դրամ): Գրաֆիկորեն եկամուտները ունեն հետևյալ տեսքը:

Գծապատկեր 1. Վանաձոր համայնքի 2008-2012 բյուջեների ճշտված և փաստացի եկամուտները




2008 թ.-ին համայնքի բյուջեի մուտքեր հիմնական միջոցների իրացումից պլանավորվել է 731,613 հազար դրամ (փաստացի կազմել է 522,132), տարեսկզբի ազատ մնացորդը՝ 13,581 հազար դրամ, 2009 թ.-ին համապատասխանաբար 296,170 (փաստացի 137,452) և 8,091 հազար դրամ, 2010 թ.-ին՝ 229,011 հազար դրամ (փաստացի 137,452) և 2,221 հազար դրամ, 2011 թ.-ին ՝ 371,825 հազար դրամ (փաստացի 348,988) և 71,379 հազար դրամ, 2012 թ.-ին՝ 212,200 հազար դրամ (փաստացի 144,878) և 22,102 հազար դրամ:

Գծապատկեր 2ա. Վանաձոր համայնքի մուտքերը հիմնական միջոցների իրացումից 2008-2012թթ.



Գծապատկեր 2բ. Վանաձոր համայնքի տարեսկզբի ազատ մնացորդը 2008-2011թթ.




Բերված թվերից երևում է, որ համայնքի բյուջեի եկամուտային մաս աճի տեմպը 2009թ-ի համար պլանավորվել է 27 %, 2010- ին 6 %, իսկ 2011 և 2012 գրեթե աճ չի նախատեսվել: Եկամուտների փաստացի աճը 2009, 2010, 2012 թթ- ին համապատասխանաբար կազմել է 23%, 10% և 14%, իսկ 2011 -ին նվազել է 1% -ով:

Համեմատելով Վանաձոր համայնքի բյուջեի եկամուտները ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների հետ՝ ստացվում է հետևյալ պատկերը: Պլանավորման առումով Վանաձոր համայնքի բյուջեի եկամուտները կազմում են 2008 թ.-ին 2.53%, 2009 թ.-ին 3.19%, 2010 թ.-ին 2.15%, 2011 -ին՝ 1.90%, 2012 թ.-ին՝ 1.73%: Փաստացի կշիռները բավականին մոտ են պլանավորվածին և 2009-2012թթ ի համար համապատասխանաբար կազմում են՝2.74%, 3.12%, 2.16%, 2.05%, 2.12%

Համեմատելով Վանաձոր համայնքի բյուջեի եկամուտները ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների հետ ստացվում է հետևյալ պատկերը: Պլանավորման առումով Վանաձոր համայնքի բյուջեի եկամուտները կազմում են 2008 -ին 2.53%, 2009 -ին 3.19%, 2010 թ.-ին 2.15%, 2011 -ին `1.90%, 2012 -ին ` 1.73%: Փաստացի կշիռները բավականին մոտ են պլանավորվածին և 2009-2012թթ ի համար համապատասխանաբար կազմում են՝2.74%, 3.12%, 2.16%, 2.05%, 2.12%

Գծապատկեր 3. Վանաձոր համայնքի պլանային և փաստացի եկամուտների կշիռը ՀՀ համայնքների բյուջեի մեջ




Գծապատկերից կարելի է եզրակացնել, որ եկամուտների հավաքագրման մակարդակով համայնքի ցուցանիշները գրեթե համընկնում են, իսկ 2011 և 2012 -ին նույնիսկ գերազանցում են միջին հանրապետական մակարդակը: Սակայն 2009 -ից

համայնքի տեսակարար կշիռը ՀՀ համախմբված բյուջեում նվազում է ինչը վկայում է միջին հանրապետականից եկամուտների բացարձակ մեծության աճի նվազում:

Քանի որ ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների մեջ 2009 թ-ից ներառվում է նաև Երևանի բյուջեի եկամուտները, ինչպես նաև գոյություն ունեն բազմազան հանգամանքներ, որոնք կարող են ազդել եկամուտների վրա, դիտարկվել է նաև մարզային կտրվածքը այդ գործոնների ազդեցությունները չեզոքացնելու համար:

Գծապատկեր 4. Վանաձոր համայնքի պլանային և փաստացի եկամուտների կշիռը ՀՀ Լոռի մարզի համայնքների բյուջեի մեջ




Մարզի կտրվածքով հաշվարկված ցուցանիշների հիման վրա կարելի է եզրակացնել, որ եկամուտների հավաքագրումը գրեթե կրկնում է միջին հանրապետական ցուցանիշները և տենդենցները: Աճի տեմպի առումով Վանաձորի և միջին մարզային մակարդակները 2009 -ին հետո հիմնականում համընկնում են, 2012 -ին մի փոքր գերազանցելով միջին մազային ցուցանիշը:

Եկամուտների կանխատեսման հետաքրքիր պատկեր է նաև սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի եկամուտներ մեջ: Ըստ եկամտի աղբյուրի տեսակարար կշիռը ի հայտ է բերում հետևյալ պատկերը:

Գծապատկեր 5. Սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ՝ ըստ տարեկան պլանների




Վերը բերված պատկերը ցույց է տալիս, որ համայնքի պլանավորած եկամուտների կեսից ավելին, 2008 թ.-ին 54.88%, 2009 թ.-ին 56.63%, 2010 թ.-ին 62.22%, 2011 -ին 61.4% և

2012՝ 61.1%, գոյանում է պետության կողմից համահարթեցման նպատակով տրամադրվող դոտացիաներից, նպատակային սուբվենցիաներից և այլ պետական տրանսֆերտներից: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ կշիռների դինամիկան բացասական է, ինչը նշանակում է, որ համայնքի կախվածությունը պետական բյուջեից ավելանում է և, հետևաբար նվազում է համայնքի ֆինանսական անկախությունը: Պլանավորման ընթացքում եկամուտների տեսակարար կշռի նվազում մատնանշում է նաև, որ համայնքի եկամուտների կանխատեսելիս մեծ է պետության կողմից ստացված տրանսֆերտների աճի գործոնը: Եվ փաստացի, եկամուտների աճի զգալի մասը կազմում է պետական տրանսֆերտների աճը, ինչը հստակ երևում է փաստացի եկամուտների կշռից և աճի տեմպերից:

Գծապատկեր 6. Սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ՝ ըստ տարեկան փաստացի եկամուտների




Ինչպես երևում է գծապատկերից փաստացի եկամուտների մասով նույնպես դիտվում է սեփական եկամուտների տեսակարար կշռի նվազում ընդհանուր եկամուտների մեջ, ինչը հաստատում է պետական բյուջեից ֆինանսական կախվածության փաստացի մեծացում: Սեփական փաստացի եկամուտների կշիռը ընդհանուր փաստացի եկամուտների մեջ 2008 թ.-ին կազմել է 44.7%, 2009 -ին 40.4%, 2010 թ.-ին 37.0%, 2011 թ.-ին 36.8%, 2012 թ.-ին 31.4%:

Ընդհանրապես սեփական եկամուտների կառուցվածքը հետևյալն է: Սեփական եկամուտների մեջ իր կշռով առավելագույնը հարկային եկամուտներն են: Դրանք 2008 թ.-ին կազմել են 263, 342 կամ 44.3%, 2009 թ.-ին կազմել են 331, 000 հազար դրամ կամ 54.1%, 2010 թ.-ին 307, 260 հազար դրամ կամ 49.8%, 2011 թ.-ին 319, 300 հազար դրամ կամ 44.5%, 2012 334, 300 հազար դրամ կամ 47.8%: Ընդորում հարկային եկամուտների մեջ մոտ 80%-85% գույքահարկն է: Իր տեսակարար կշռով երկրորդն է մեծությամբ «Այլ եկամուտներ” տողն է, որի տեսակարար կշիռը 2008 -ին կազմել է 43.3%, 2009 թ.-ին՝ 33.7%, 2010 թ.-ին՝ 37.9%, 2011 թ.-ին՝ 42.7%, 2012 թ.-ին՝ 38.8%:

Այլ եկամուտները ձևավորում են օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքի ենթակա այլ եկամուտներ, որի զգալի մասը աղբահանության վճարներն են: Տուրքերը համայնքում ըստ տարիների կազմել են 2008 –ին 73, 427 հազար դրամ կամ սեփական եկամուտների 12.4%, 2009 թ.-ին՝ 78, 337 հազար դրամ կամ 12.2%, 2010 թ.-ին՝ 91, 935 հազար դրամ կամ 12.3%, 2011 թ.-ին՝ 83, 613 հազար դրամ կամ 12.7%, 2012 թ.-ին՝ 86, 358 հազար դրամ կամ 13.3%: Պետական և տեղական տուրքերի տեսակարար կշիռները գրեթե հավասար են:

Գծապատկեր 7. Վանաձոր համայնքի սեփական եկամուտների կառուցվածքը 2008-2012թթ




Համայնքի եկամուտները մեկ բնակչի հաշվով 2008 թ.-ին եղել են 12,671.29 դրամ, 2009 թ.-ին՝ 15,646.95 դրամ, 2010 –ին՝ 17,260.91 դրամ, 2011 թ.-ին՝ 17,052.85 դրամ, 2012 թ.-ին՝ 19,313.17 դրամ: Փաստորեն 2008 -ի համեմատ մեկ շնչին ընկնող եկամուտը աճել է շուրջ 6,600 դրամ: Սակայն հիմք ընդունելով սեփական եկամուտների ցածր տեսակարար կշիռը և դրա հետագա նվազումը դիտարկվող տարիների ընթացքում, կարելի է փաստել, որ մեկ շնչին ընկնող եկամտի աճը հիմնականում պայմանավորված է պետական տրանսֆերտների աճով: Այսպիսով՝ մեկ շնչին ընկնող սեփական եկամուտները 2008 թ.-ին կազմել են՝ 5,661.22 դրամ, 2009 թ.-ին՝ 6,324.96 դրամ, 2010–ին՝ 6,390.92 դրամ, 2011 թ.-ին՝ 6,269.13 դրամ, 2012 թ.-ին՝ 6,065.67 դրամ, որից երևում է, որ սեփական եկամուտների հաշվին մեկ շնչին բաժին ընկնող եկամուտները 2008թ. համեմատ 2012թ. աճը կազմում է ընդամենը մոտ 400 դրամ:

Հատկանշական է, որ դիտարկված տարիների համար մեկ շնչին ընկնող համայնային եկամուտի միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 2008 –ին՝ 16,012.0, 2009 թ.-ին՝ 16,239.0 դրամ, 2010 –ին՝ 26,138.0 դրամ, 2011 թ.-ին՝ 26,711.0 դրամ, 2012 թ.-ին՝ 29,143.16 դրամ: Մարզի կտրվածքով դիտարկվող տարիների համար համապատասխան

ցուցանիշները եղել են 2008 թ.-ին ՝ 15,403.6, 2009 թ.-ին՝ 15,617.4, 2010 թ.-ին՝ 16,501.4, 2011 թ.-ին՝ 16,657.7 և 2012 թ.-ին՝ 18,258.9 դրամ:

Գծապատկեր 8. Մեկ շնչին ընկնող եկամուտների հանրապետական, մարզային և համայնքային ցուցանիշները




Համայնքի սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշ է ապառքների մակարդակը: ՀՀ Վերահսկիչ պալատը համայնքի 2008թ-ի հողի հարկի գծով ապառքը գնահատել է 113,201.6 հազար դրամ բյուջեով նշվել է 113,138.4 դրամ, գույքահարկի գծով՝ 97,575.6 (625,188.3 հազար դրամ, որից 527,612.7 հազար դրամը անհուսալի)[1], բյուջեում նշված է 368, 620.9: Ըստ 2009-2012 Վանաձոր համայնքի զարգացման ծրագրի ապառքները գնահատվել են հողի հարկի գծով 137,815.9, գույքահարկի գծով 234,440.4 (693,630.6 հազար դրամ, որից 459,190.2 հազար դրամն անհուսալի): ՀՀ տարածքային նախարարության կայքում հրապարակված տվյալների համաձայն հողի հարկի գծով ապառքը կազմել է 2010 թ.-ին 65,239.8 հազար դրամ, 2011 թ.-ին՝ 62,915.8 հազար դրամ, գույքահարկի մասով 2010 թ.-ին՝ 223,310.6 հազար դրամ, իսկ 2011 թ.-ին՝ 222,225.0 հազար դրամ: Հարկ է նշել, որ այս տարիների համար ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը խստորեն հետևում էր համայնքներում գոյացած ապառքների հավաքագրմանը:

[1] http: //www.coc.am/ShowReportArm.aspx?ReportID=178

## Ծախսերի վերլուծություն

Վանաձոր համայնքի բյուջեի ծախսերի գնահատման համար, նախ և առաջ դիտարկվել է ըստ տարիների պլանավորված և փաստացի իրականացած ծախսերի բացարձակ մեծությունները և դրանց դինամիկան: 2008 թ-ին ծախսերի ընդհանուր մեծությունը կազմել է 2,046,116 հազար դրամ (իրականացվել է 1,801,934 հազար դրամ), 2009 թ-ին՝ 1,739,347.9 հազար դրամ (իրականացվել է 1,606,028.3 հազար դրամ), 2010 թ-ին՝ 1,830,525.0 հազար դրամ (իրականացվել է 1,739,785.7 հազար դրամ), 2011 թ-ին՝ 1,840,064 հազար դրամ (իրականացվել է 1,839,826.9 հազար դրամ), 2012 թ-ին՝ 1,872,741.6 հազար դրամ (իրականացվել է 2,029,005.2 հազար դրամ):

Բերված տվյալները ցույց են տալիս, որ բյուջեի ծախսերը նվազել են միայն 2009 թվականին: 2009 թվականից սկսած բյուջետային ծախսերը աճել են, սակայն միայն 2011 թ.-ին մի փոքր գերազանցել 2008 թվականի մակարդակը:

Գծապատկեր 9. Վանաձոր համայնքի բյուջեների ծախսերն ըստ տարիների (2008-2012)




Ըստ պլանավորված ծախսերի նախատեսվել է, որ 2009 թ-ին 2008 թ-ի համեմատ կնվազի 18.1%, 2010 թ-ին կաճի 5.2%, 2011 թ-ին՝ 0.5%, իսկ 2012 թ-ին՝ 1.5 %: Փաստացի ծախսերը 2009 թ-ին նվազել է 10.9 %, իսկ 2010, 2011, և 2012 թթ-ին համապատասխանաբար աճել է 8.3 %, 5.8% և 10.3%:

Փաստորեն, պլանավորված և փաստացի ծախսերի մեծության շեղումը ըստ տարիների նվազում է 2011 թ.-ին գրեթե համընկնելով, իսկ 2012 -ին դիտվում է ծախսերի թերի պլանավորում, ինչի արդյունքում բյուջեն գերակատարվում է 8.3%.

Հիմնվելով բերված տվյալների վրա՝ կարելի է ասել, որ տարվա կտրվածքով պլանավորման գործընթացը բավականին զգուշորեն է իրականացվում: Նույն են հուշում նաև բյուջեի կատարողական ցուցանիշները: 2009 թ-ին բյուջեի կատարողականը կազմել է 92.3%, 2010 թ.-ին՝ 95.0%, 2011 թ.-ին ՝ 99.99%, իսկ 2012 թ.-ին՝ 108.3%: Հստակ է, որ քաղաքապետարանը պլանավորման գործընթացում զգուշություն է ցուցաբերում: Նման մոտեցումը արդարացված է բարձր կատարողականների տեսակետից, սակայն հաճախ պատճառ է դառնում ցածր նշաձող սահմանելուն, ինչն իր հերթին սահմանափակում է աճը և մատուցվող ծառայությունների քանակը և նվազեցնում որակը:

Աղյուսակ 22. Վանաձոր համայնքի ծախսերի կատարողականը ըստ պլանավորված ծախսերի և ճշտված պլանի

| Տարի | Պլան | Ճշտված պլան | Փաստացի | Կատարողական (փաստ/պլան) | Կատարողական (փաստ/ճշտված պլան) |
|---|---|---|---|---|---|
| 2008 | 2, 124, 122.80 | 2, 124, 122.80 | 1, 801, 934.00 | 84.8% | 84.8% |
| 2009 | 1, 739, 347.90 | 1, 693, 871.60 | 1, 606, 028.30 | 92.3% | 94.8% |
| 2010 | 1, 830, 525.00 | 1, 833, 151.10 | 1, 739, 785.70 | 95.0% | 94.9% |
| 2011 | 1, 840, 064.00 | 1, 914, 133.30 | 1, 839, 826.90 | 100% | 96.1% |
| 2012 | 1, 872, 741.60 | 2, 090, 738.40 | 2, 029, 005.20 | 108.3% | 97.0% |

Տեղական ինքնակառավարման մարմինները տարվա ընթացքում հնարավորություն ունեն լրացուցիչ տեղեկատվության հիման վրա ճշտել բյուջեի ծախսային հոդվածների մեծությունը: Բյուջետային ծախսերի փոփոխությունը զգալի չէ, միջինը 3%-4% սահմաններում[2], առավելագույնը՝ 8%: Ծախսերի ճշտման հետևանքով բյուջեի կատարողականը կազմել է 2008 թ.-ին 84.8 %, 2009 թ.-ին՝ 94.8%, 2010 թ.-ին՝ 94.9%, 2011 թ.-ին՝ 96.1%, 2012 թ.-ին՝ 97.0%:

Համեմատելով նույն ժամանակահատվածի համար ՀՀ համայնքների բյուջեի և մարզի համայնքների բյուջեների աճը Վանաձորի բյուջեի աճի հետ՝ կարելի է նկատել, որ միայն 2011 և 2012 թվականներին, Վանաձորի բյուջեի աճի տեմպը մոտ է եղել միջին հանրապետականին, մնացած տարիների համար աճը ցածր է:

Գծապատկեր 10. ՀՀ պետական բյուջեի, ՀՀ համայնքների բյուջեների, Լոռվա մարզի համայնքների բյուջեների և Վանաձոր համայնքի բյուջեի ծախսերի աճը ըստ տարիների[3]




Վանաձոր համայնքի ծախսերի տեսակարար կշիռները ըստ ծախսերի գործառնական դասակարգման հետևյալն է:

[2] Նշված փոփխությունների վրաբերյալ կայացված ավագանու որոշումները տեղադրված են Վանա ձորի ինտերնետային կայքում, սակայն այդ որոշումներին կից հավելվածները բացակայում են, ինչը դժվարեցնում է գնահատել փոփխության անհրաժեշտությունը:

[3] 2010թ-ին ՀՀ համայնքների արձանագրված աննախադեպ աճը պայմանավորված է Երևան համայնքին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման աճով:

Աղյուսակ 23. Գործառնական դասակարգմամբ Վանաձոր համայնքի ծախսերի տեսակարար կշիռը

| Ծախսեր | 2009 | Կշիռ | 2010 | Կշիռ | 2011 | Կշիռ | 2012 | Կշիռ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 350,991 | 20% | 358,317 | 20% | 345,540 | 19% | 384,089 | 21% |
| 2. Պաշտպանություն | 300 | 0% | 300 | 0% | 300 | 0% | 300 | 0% |
| 3. Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն | 500 | 0% | 500 | 0% | 500 | 0% | 500 | 0% |
| 4. Տնտեսական հարաբերություններ | (478,530) | -28% | (81,545) | -4% | (74,800) | -4% | (48,950) | -3% |
| 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն | 348,842 | 20% | 330,615 | 18% | 335,842 | 18% | 339,242 | 18% |
| 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 246,252 | 14% | 163,590 | 9% | 210,160 | 11% | 161,430 | 9% |
| 7. Հանգիստ, մշակույթ, կրոն | 204,208 | 12% | 201,153 | 11% | 192,864 | 10% | 186,468 | 10% |
| 8. Կրթություն | 918,106 | 53% | 712,451 | 39% | 634,916 | 35% | 677,003 | 36% |
| 9. Սոցիալական պաշտպանություն | 38,519 | 2% | 38,676 | 2% | 38,791 | 2% | 48,791 | 3% |
| 10. Պահուստային ֆոնդ | 110,160 | 6% | 116,469 | 6% | 170,951 | 9% | 123,869 | 7% |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 1,739,348 | 100% | 1,830,525 | 100% | 1,840,064 | 100% | 1,872,742 | 100% |

## 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

Համայնքների բյուջեներում տվյալ հոդվածի գերակշիռ մասը համայնքի աշխատակազմի պահպանման ծախսերն են և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատավարձերը:

Վանաձոր համայնքի բյուջեով նախատեսված ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների բացարձակ մեծությունները բերված են Աղյուսակ 2-ում: Բերված մեծությունների հիման վրա հաշվարկվել են այս հոդվածի տեսակարար կշիռը, որը նույնպես առկա է աղյուսակում: Դատելով թվերից կարելի է փաստել, որ տեսակարար կշիռները մինչև 2012թ ունեցել են նվազման միտում, իսկ 2012 -ին կտրում աճել են:

Գծապատկեր 11. Վանաձորի ընդհանուր բնույթի ծառայությունների տեսակարար կշիռների դինամիկան




Ըստ «Համայնքների ֆինանսիստների միավորում” ՀԿ (ՀՖՄ) կողմից 2013 մշակված համայնքների ծախսային քաղաքականության մեթոդաբանության[4], որտեղ գնահատված են՝ ըստ համայնքների տիպերի, ծախսային հոդվածների տեսակարար կշիռները, կարելի է փաստել, որ այս հոդվածով ծախսերը համապատասխանում են մեթոդաբանությամբ առաջարկվող 23.7% մեծությանը:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հոդվածի փաստացի ցուցանիշները 2009 թ.-ին կազմել է 20.8%, 2010–ին 20.8%, 2011 թ.-ին 20.4%, և 2012 թ.-ին 18.3%

## 2. , 3. Պաշտպանություն, Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն

Այս ծառայությունները իրականացվում են պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում: Այս ծախսերի մեծությունը ընդհանուր ծախսերի մեջ աննշան է և դրանք հիմնականում տարիների ընթացքում չեն փոխվում:

## 4. Տնտեսական հարաբերություններ

Վանաձոր համայնքի բյուջեի ծախսային մասում գործառնական դասակարգմամբ տնտեսական հարաբերությունները ընդգրկում են տրանսպորտը և տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող[5]) հոդվածները:

2009-2012թթ այս ծախսային հոդվածը աճող տենդեց ունի ի հաշիվ համայնքի հիմանական միջոցների վաճառքի կրճատման:

[4] http: //www.mta.gov.am/files/docs/498.pdf

[5] Հիմանկանում գոյանում է հիմանական միջոցների վաճառքից, և բյուջեում արտացոլվում է բացասական նշանով

Գծապատկեր 12. Տնտեսական հարաբերություններ հոդվածի տեսակարար կշռի դինամիկան 2009-2012թթ




## 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն

Ծախսային հոդվածը 2009թ-ին պլանավորվել է 348,842 հազար դրամ կամ ընդհանուր ծախսերի մեջ 20.1%, կատարվել է 326,567.6 հազար դրամ կամ 20.3%, 2010 –ին պլանավորվել է 330,615 հազար դրամ կամ 18.1%, կատարվել է 363,518.2 հազար դրամ կամ 20.9%, 2011–ին պլանավորվել է 335,842 հազար դրամ կամ 18.3%, կատարվել է 339,229 հազար դրամ կամ 18.4%, 2012–ին պլանավորվել է 339,242 հազար դրամ կամ 18.1%, կատարվել է 330,283 հազար դրամ կամ 16.3%:

## 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն

Ծախսային հոդվածը 2009 թ-ին պլանավորվել է 246,252 հազար դրամ կամ ընդհանուր ծախսերի մեջ 14.2%, կատարվել է 134,063 հազար դրամ կամ 8.3%, 2010–ին պլանավորել է 163,590 հազար դրամ կամ 8.9%, կատարվել է 214,711 հազար դրամ կամ 12.3%, 2011 թ.–ին պլանավորել է 210,160 հազար դրամ կամ 11.4%, կատարվել է 177,243 հազար դրամ կամ 9.6%, 2012 թ.–ին պլանավորվել է 161,430 հազար դրամ կամ 8.6%, կատարվել է 153,494 հազար դրամ կամ 7.6%:

## 7. Հանգիստ, մշակույթ, կրոն

Ծախսային հոդվածը 2009 թ.-ին պլանավորվել է 204,208 հազար դրամ կամ ընդհանուր ծախսերի մեջ 11.7%, կատարվել է 184,919 հազար դրամ կամ 11.5%, 2010 թ.–ին պլանավորել է 201,153 հազար դրամ կամ 11.0%, կատարվել է 184,002 հազար դրամ կամ 10.6%, 2011 թ.–ին պլանավորել է 192,864 հազար դրամ կամ 10.5%, կատարվել է 192,233 հազար դրամ կամ 10.4%, 2012 թ.–ին պլանավորել է 186,468 հազար դրամ կամ 10.0%, կատարվել է 188,404 հազար դրամ կամ 9.3%:

## 8. Կրթություն

Համայնքների բյուջետային ծախսերի կրթության տողը ամենամեծերից մեկն է: Վանաձորը բացառություն չէ: Կրթության ծախսերը 2009 թ.-ին պլանավորվել է 918,106 հազար դրամ (փաստացին կազմել է 667,905 հազար դրամ), 2010 թ.-ին պլանավորվել է 712,451 հազար դրամ (փաստացին կազմել է 614,882.7 հազար դրամ), 2011 թ. -ին

պլանավորվել է 634,916 հազար դրամ (փաստացին կազմել է 850,339 հազար դրամ), 2012 թ.-ին պլանավորվել է 677,003 հազար դրամ փաստացին կազմել է 912,432 հազար դրամ:

Գծապատկեր 13. Վանաձորի բյուջեի կրթության պլանային և փաստացի ծախսերը 2009-2012թթ




Ինչպես երևում է գծապատկերից, կրթության ծախսերի պլանային և տարվա ընթացքում իրականցված պլանի ճշտումը բավականին տարբերվում է փաստացի ծախսերից:

Գծապատկեր 14. Վանաձորի բյուջեի կրթության ծախսերի տեսակարար կշիռները 2009-2012թթ




## 9. Սոցիալական պաշտպանություն

Սոցիալական պաշտպանությունն իրականացվում է պատվիրակված լիազորությունների շրջանակում: Պետությունը պարտավորվում է ֆինանսավորել պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերը և այդ ծախսերի վրա իրականացնում է վերահսկողություն: Այս ծախսերի մեծությունը հիմնականում կապված է համայնքի մեծության հետ և չի արտացոլում համայնքի ծախսային քաղաքականությունը;

Գծապատկեր 15. Սոցիալական պաշպանության ծախսերը Վանաձոր համայնքի բյուջեում 2009-2012թթ.




Վանաձոր համայնքի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման ընդհանուր հոդվածներով հետևյալն են:

Գծապատկեր 16. Վանաձոր համայնքի պլանային ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման 2009-2012թթ.




Ինչպես երևում է ծախսերի գերակշիռ մասը պլանավորվում է որպես ընթացիկ ծախս: 2009 թ.-ին ընթացիկ ծախսերը պլանավորվել են 1,745,114.6 հազար դրամ, 2010 թ.-ին՝ 1,830,525.0 հազար դրամ, 2011թ.-ին՝ 1,840,064.0 հազար դրամ և 2012 թ.-ին՝ 1,859,471.6 հազար դրամ: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը պլանավորվել են 2009 թ.–ին՝ 437,170.0 հազար դրամ, 2010 թ.-ին՝ 191,455.0 հազար դրամ, 2011 թ.-ին՝ 212,000.0 հազար դրամ, 2012 թ.-ին՝ 248,470.0 հազար դրամ: Ոչ ֆինանսական ակտիվների մուտքերը՝ 576,170.0 հազար դրամ, 181,455.0 հազար դրամ, 197,000.0 հազար դրամ, 235, 200.0 հազար դրամ:

Գծապատկեր 17. Վանաձոր համայնքի փաստացի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման 2009-2012թթ.




Ինչպես երևում է գծապատկերից փաստացի ծախսերի մեծության մեջ նույնպես գերակշիռ է ընթացիկ ծախսերը, սակայն նկատելի է նաև ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսի աճ: 2010 թ.-ին 2009 թ.-ի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսի աճը կազմել է 97.3%, 2011 թ.–ին 2010 թ.-ի համեմատ 42.3%, 2012 թ.-ին նվազել է 2.1% -ով, ինչի հիմնական ազդեցությունը ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի նվազումն է:

Առհասարակ, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսի և ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի միջև պլանավորման ընթացքում դիտվում է հստակ կապ: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսը պլանավորվում են հիմնական միջոցների կանխատեսվող վաճառքներին և համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներին համապատասխան:

Գծապատկեր 18. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և իրացումից մուտքերը




Պլանավորման նման պայմաններում ֆոնդային բյուջեի ծախսերը ի սկզբանե դիտվում են որպես ծախսեր, որոնք ունեն նվազ առաջնահերթություն և միայն իրականացվում են առկա ֆինանսական միջոցների պայմաններում, հիմնականում տվյալ և նախորդ տարվա ընթացիկ ծախսերից առաջացած խնայողությունների /թերակատարումների հաշվին:

Գծապատկեր 19. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսի և ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի տարբերությունը ըստ տարիների (2009-2012 թթ.)




Ծախսերի ընթացիկ մասը ներկայացված է ստորև աղյուսակում:

Աղյուսակ 24. Վանաձոր համայնքի 2009-2012թթ. ընթացիկ ծախսերը՝ տնտեսագիտական դասակարգմամբ

| Ծախս | 2009 | | 2010 | | 2011 | | 2012 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ճշ.պլան | փաստ | ճշ.պլան | փաստ | ճշ.պլան | փաստ | ճշ.պլան | փաստ |
| Աշխատանքի վարձատրություն | 329,014.7 | 328,434.9 | 316,988.3 | 301,330.7 | 259,147.6 | 291,351.6 | 288,634.6 | 289,928.3 |
| Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում | 507,805.4 | 470,304.5 | 518,945.1 | 559,045.5 | 548,333.4 | 514,146.2 | 540,156.4 | 516,394.2 |
| Սուբսիդիաներ | 813,496.7 | 775,367.9 | 847,700.0 | 718,573.4 | 801,549.0 | 830,679.9 | 846,729.0 | 826,712.6 |
| Դրամաշնորհներ | 19,677.3 | 8,494.0 | 15,800.0 | 11,410.0 | 45,460.0 | 13,045.0 | 35,460.0 | 17,541.2 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 17,100.0 | 17,016.2 | 12,000.0 | 15,000.0 | 12,000.0 | 27,875.0 | 22,000.0 | 23,093.0 |
| Այլ ծախսեր | 1,800.0 | 1,611.9 | 119,091.6 | 136,405.7 | 173,574.0 | 105,757.7 | 126,491.6 | 115,821.4 |
| **Ընդամենը ընթացիկ ծախսեր** | 1,688,894.1 | 1,601,229.4 | 1,830,525.0 | 1,741,765.3 | 1,840,064.0 | 1,782,855.4 | 1,859,471.6 | 1,789,490.7 |

# 3. Վանաձոր համայնքի 2009-2012 զարգացման քառամյա ծրագրի արտացոլումը համայնքի բյուջեում և ՏԻՄ որոշումներում

Պլանավորումը ցանկացած գործունեության կառավարման կարևոր և պարտադիր գործառույթ է, քանի որ այդ գործընթացով տեղի է ունենում զարգացման հնարավորությունների պարզում, նպատակների և առաջնահերթությունների որոշում, դրանց հասնելու ուղիների և մեթոդների սահմանում:

Պլանավորման գործառույթի իրականացման ձևը ծրագրի մշակումն է: Մեխանիզմը, որով գործողության մեջ է դրվում պլանավորման գործընթացը ՀՀ համայնքներում կարգավորվում է ՏԻՄ օրենքով: Օրենքը նախատեսում է, որ. «համայնքի ղեկավարն ընտրվելուց հետո առաջին տարեկան բյուջեն ներկայացնելիս միաժամանակ համայնքի ավագանուն է ներկայացնում համայնքի զարգացման քառամյա ծրագիր»:

Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթուղթն է, որն ուղղորդում է որոշումների կայացումը մոտակա չորս տարիներին: Դրանում արտացոլված են համայնքի հիմնախնդիրները և նշվում է քաղաքականությունը այդ խնդիրները լուծելու համար: Քաղաքականությունը արտահայտվում է ծրագրերում, որոնք իրականացվում են ըստ առաջնահերթությունների՝ հիմնվելով գնահատման ցուցանիշների կամ սկզբունքների վրա: Քառամյա զարգացման ծրագրերում ընդգրկված ծրագրերի համար սահմանվում են նպատակներ, խնդիրներ, գործողություններ, նշվում են ակնկալվող արդյունքները և կատարվում է նպատակին հասնելու համար ծախսերի գնահատում: Ծրագրի իրականացման ընթացքում ըստ տարիների համայնքի բյուջեն ներառում է այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են քառամյա զարգացման ծրագրով սահմանված նպատակների իրականցմանը և արդյունքներին հասնելու համար:

Հանդիսանալով համայնքի հիմնախնդիրներն ապահովող փաստաթուղթ՝ համայնքի զարգացման ծրագիրը ենթակա է հրապարակման և քննարկման, որպեսզի համայնքի բնակիչները ճշմարիտ պատկերացում ունենան հեռանկարային և առկա հիմնախնդիրների, դրանց լուծման ուղիների վերաբերյալ և արտահայտեն իրենց վերաբերմունքը: Սա հատկապես կարևոր է այն առումով, որ սահմանափակ ֆինանսական միջոցները հնարավորություն չեն տալիս համայնքին միաժամանակ լուծել բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք հիմնականում կապված են համայնքի ենթակառուցվածքների թերզարգացվածության հետ, ուստի կարևորվում է հիմնախնդիրների առաջնահերթության սկզբունքը, որը ենթադրում է մարդկանց կարիքների գնահատում: Մեր գրավոր հարցման արդյունքում պարզել ենք, որ համայնքի ղեկավարի կողմից կարիքի գնահատում չի կատարվում և դասակարգված չեն համայնքի հիմնախնդիրները:

Համայնքի ղեկավարը 2009-2012 թթ. ծրագրի ուղերձում հռչակում է համայնքի զարգացման ծրագրի նպատակաուղղվածությունը. «Վանաձոր քաղաքի ներդաշնակ և համաչափ զարգացման, վանաձորցիների բարեկեցության ապահովման համար առաջիկա չորս տարիներին քառամյա զարգացման ծրագիրը հանդիսանալու է մեր ամենօրյա

աշխատանքային փաստաթուղթը: Մեր բոլորիս ջանքերն ու եռանդը պետք է նպատակաուղղենք Վանաձոր քաղաքի զարգացմանն ու բարգավաճմանը»:

Այնուամենայնիվ նախորդ չորս տարիների ընթացքում համայնքի ավագանին իր ոչ մի նիստում չի անդրադարձել համայնքի քառամյա ծրագրով նախատեսնված հիմնախնդիրների կատարման ընթացքին: Համայնքի ղեկավարը նախորդ չորս տարիների ընթացքում չի ընդունել որևէ որոշում, որը ուղղված լիներ քառամյա ծրագրով նախատեսնված խնդիրների լուծմանը(ուսումնասիրված գրեթե յոթ հազար որոշումներից որևեէ մեկում հողում չի կատարվել նշված հիմնախնդիրների լուծմանը):

Հիմնվելով ծրագրով սահմանված նպատակների, արդյունքների և դրանց իրականացման համար գնահատված ֆինանսական միջոցների վրա գնահատվել է համայնքի 2009-2012թթ. բյուջեները՝ ըստ գործունեության ուղղությունների:

**Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում**

**Նպատակ.** Ապահովել Վանաձորի քաղաքապետարանի գործունեության թափանցիկության բարձր մակարդակ:

Աղյուսակ 25. ՏԻՄ գործունեության թափանցիկությանը միտված հատկացումների պլաններ

| Խնդիր | 2009 | 2010 | 2011 | 2012 |
|---|---|---|---|---|
| 1) Համակարգչային տեխնիկական բազայի թարմացում | 40% | 20% | 20% | 20% |
| 2) Ինտերնետային կայք էջի շահագործում | 93,200.0 | 93,200.0 | 93,200.0 | 93,200.0 |
| 3) Կորպորատիվ ինտերնետային կապ | 2,400,000.0 | 2,400,000.0 | 2,400,000.0 | 2,400,000.0 |
| 4) Համայնքի բնակիչների շրջանում ՏԻՄ-ի գործունեության թափանցիկության մակարդակը պարզելուն և համայնքի զարգացման վերաբերյալ համայնքի բնակիչների կարծիքի ուսումնասիրմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտությունների իրականացում | 800,000.0 | 800,000.0 | 800,000.0 | 800,000.0 |

1) Սահմանված խնդրի հիման վրա անհնար է պարզել թե՛ համակարգիչների թիվը, որոնք պետք է թարմացվեն, և՛ դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Բացի այդ անհնար է հասկանալ, արդյոք քաղաքապետարանի բոլոր համակարգիչներն են ենթակա թարմացման, թե համակարգիչներից ոմանք արդեն իսկ ժամանակակից են: 2009 թ.-ին բյուջեի “Վարչական սարքավորումներ” տողով (5122), որը ենթադրաբար օգտագործվել է այս նպատակին նախատեսվել է 5000.0 հազար դրամ, իրականացվել 1188.0 հազար դրամ, 2010 թ.-ին նախատեսվել 3,895.5 հազար դրամ իրականացվել 3,954.6 հազար դրամ, 2011 թ.-ին նախատեսվել է 9387.4 հազար դրամ ծախսվել է՝ 9296.2 հազար դրամ, 2012 թ.-ին նախատեսվել է՝ 32,868.0

հազար դրամ, կատարվել է 28,393.7 հազար դրամ: Ընդհանուր առմամբ նախատեսվել է՝ 51,150.90 հազար դրամ, ծախսվել է՝ 42,773.40 հազար դրամ: Ենթադրելով, որ քաղաքապետարանի համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող յուրաքանչյուր աշխատակցի համակարգիչը թարմացվել է, իսկ համակարգչի գինը 200.0 հազար դրամ է՝ ստացվում է, որ համակարգիչների վրա ծախսված գումարը կլինի մոտ 27,000.0 հազար դրամ, ինչը լիովին բավարար է նախատեսված և ծախսված գումարների սահմաններում: Սակայն 2013-2016թթ զարգացման ծրագրում նախատեսվում է ևս 50% համակարգիչների թարմացում:

2) Տվյալ խնդրի իրականացման համար կատարվել են ընթացիկ ծախսեր: Համայնքի բյուջեն բոլոր տարիների համար նախատեսում է միջոցներ համակարգչային ծառայությունների համար, որտեղ կարող են ներառված լինել նաև ինտերնետային կայքէջի շահագործման ծախսերը: Բացի այդ քաղաքապետարանի պաշտոնական կայքէջը գործում է, ինչից կարելի է պնդել, որ տվյալ ծախսն ծառայում է իր նպատակին:
3) Այս խնդրի իրականացման համար նույնպես պահանջվում են ընթացիկ ծախսեր: Համայնքի բյուջեն նախատեսում է “Կապի ծառայություններ” տողը, որտեղ կարող է ներառվել ինտերնետ կապի ծառայությունը
4) Քառամյա զարգացման ծրագրով սահմանված է, որ ամեն տարի պետք է անցկացվի սոցիոլոգիական հետազոտություն, պարզելու համար բնակչության կարծիքը ՏԻՄ գործունեության վերաբերյալ: Նշված ուղղության բյուջեներում տող առանձնացված չէ, ուստի բյուջեների դիտարկումը ըստ տարիների հնարավորություն չի ընձեռնում միանշանակ փաստել տվյալ ուղղությամբ ծախսի առկայությունը: Առավել ևս, հետազոտությունը, որը վերաբերում է ՏԻՄ գործունեության թափանցիկությանը ինքնին պետք է հրապարակային լիներ և հասանելի: Սակայն Վանաձորի քաղաքապետարանի կայքում նման հետազոտության կամ դրա արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն չի հրապարակվել, ինչից կարելի է ենթադրել, որ նման հետազոտություն չի իրականցվել:

**Նպատակ.** Տեղական ինքնակառավարման համակարգի ֆինանսատնտեսական գործունեության արդիականացում:

Նշված նպատակի իրականցման համար միակ նշված խնդիրը համայնքի բնակչության կենսական շահերի հետազոտությունն է, որը պետք է իրականցվեի ամեն տարի: Հետազոտության իրականցման համար նախատեսված գումարը 1000.0 հազար դրամ է:

Այս ուղղությամբ համայնքի բյուջեով հոդված առանձնացված չէ: Նման հետազոտության մասին տեղեկատվության առկա չէ նաև կայքէջում, ինչը վկայում է, որ հետազոտություն չի իրականացվել:

**Նպատակ.** Գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակում:

Որպես նպատակին հասնելու խնդիր տվյալ դեպքում ծրագրով նախատեսված է Վանաձոր համայնքի զարգացման բիզնես ծրագիրը: Բիզնես ծրագրի մշակման համար

անհրաժեշտ գումարը գնահատվել է 5000.0 հազար դրամ: Սակայն, և տարեկան բյուջեների համապատասխան տողերի և նման փաստաթղթի բացակայությունը, հուշում են, որ տվյալ խնդիրը ևս չի լուծվել:

**Կոմունալ տնտեսություն և բարեկարգում**

Գործունեության տվյալ ուղղությունը իր մեջ ներառում է մի շարք ենթաուղղություններ, որոնցից են՝ կենցաղային աղբահանությունը, սանիտարական մաքրումը, փողոցների ասֆալտապատումը, կանաչ տարածքների սպասարկումը, կամուրջները, հենապատերը, էլեկտրական լուսավորությունը, թափառող կենդանիների վնասազերծումը, գետերի հունների մաքրումը, գերեզմանատների խնամք, սողանքավտանգ գոտիների ամրացում, կոմունալ այլ խնդիրներ: Նշված ենթաուղղությունների համար սահմանված են համապատասխան նպատակներ, սակայն սահմանված խնդիրները, բացառությամբ մեկ-երկուսի, չափելի չեն, ներկայացված չեն անհրաժեշտ ֆինանսական միջոցների հաշվարկ: Հաշվի առնելով այս հանգամանքը և տարեկան բյուջեում այս բոլոր ուղղություններով կատարված ծախսեր՝ կարելի ասել, որ գործունեության այս ուղղությամբ իրականցվել է: Սակայն այդ ծախսերի արդյունավետությանը անհնար է գնահատել ելնելով նպատակներից և խնդիրներից:

**Բնակարանային ֆոնդի հաշվառում և բաշխում**

Գործունեության տվյալ ուղղությամբ նախատեսված է:

Աղյուսակ 26. Բնակարանային ֆոնդի վերաբերյալ նախատեսումներ

| Նպատակ/ներ/ | խնդիր/ներ/ | ծավալ կամ քանակ | լուծման ծրագիր /ներ/ | ֆինանսներ | արդյունք/ներ/ |
|---|---|---|---|---|---|
| 1) ունենալ բնակֆոնդի վերաբերյալ ամբողջական տվյալներ | Քաղաքի բազմաբնակարան շենքերի անձնագրավորում | 1038 շենք 26.112 բնակարանով | 2009-2011թթ | | Ունենալ քաղաքի անձնագրավորված բազմաբնակարան շենքերի վերաբերյալ Հստակ համակարգչային բազա |
| 2) 3-րդ կարգի Վթարայնություն ունեցող շենքերի վերականգնման ժամանակ ունենալ հստակ տվյալներ | 3-րդ կարգի վթարայնություն ունեցող շենքերի վերաբերյալ ստեղծել առանձին համակարգչային բազա | 84 շենք 3280 բնակարանով | 2009 թ | | 3-րդ կարգի վթարայնության շենքերի վերաբերյալ անձնագրեր /ամբողջական/ |
| 3) ունենալ սեփականաշնորհ-ված բնակարաններ | ավարտել համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանների օտարման գործընթացը | 1500 բնակարան | 2009-2012թթ | | Ունենալ սեփակա-նաշնորհված բնա-կարաններով բազ-մաբնակարան շենքեր |

Ինչպես երևում է աղյուսակից՝ այս խնդիրների համար ևս ֆինանսական միջոցների գնահատում չի կատարվել, ինչը անհնար է դարձնում գնահատել համայնքի բյուջեով ծախսված գումարների արդյունավետությունը: Սակայն ի տարբերություն այլ խնդիրների, այս արդյունքներից շատերը հասանելի են կայքում[6], թեև դժվար հասանելի օգտագործողների լայն շրջանակի համար:

**Ֆիզկուլտուրա և սպորտ**

Տվյալ գործունեության ուղղությունների խնդիրներն են.

- **Կառուցողական աշխատանքներ, որից՝**
  - Ծանրամարտի մարզադահլիճի կապիտալ վերանորոգում
  - Ս.Ավետյանի անվան օլիմպիական հերթափոխի մենապայքարային մարզաձևերի մարզադպրոցի ըմբշամարտի,
  - Ա.Ազարյանի անվան ՝Կենտրոն՝ համալիր մարզադպրոցի, ՝Տարոն՝ համալիր մարզադպրոցի մարզադահլիճների կոսմետիկ վերանորոգում
  - Խաղահրապարակների վերանորոգում
  - Քաղաքային մարզադաշտի կապիտալ վերանորոգում
  - Ճոպանուղու վերակառուցում
  - Գիմնաստիկայի մարզադահլիճի կառուցում
  - Մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի կապիտալ վերանորոգում
- **Արդիականացնել մարզադպրոցների գույքը, հանդերձանքը, մարզաբազաները:**
- **Յուրաքանչյուր տարի բարձրացնել մարզիչ-մանկավարժների աշխատավարձը:**

Բյուջեների ուսումնասիրությամբ պարզվեց, որ 2011 թ.-ին նախատեսվել է "ՕՀ մենապայքարային մարզադպրոցի կապիտալ նորոգում՝ ջեռուցման համակարգի ձևափոխում" տողով 1854.5 հազար դրամ իրականցվել 1394.5 հազար դրամ և նույն տարում "Օլիմպիական հերթափոխի մենապայքարային մարզադպրոցի երկրորդ հարկի կառուցում կամ վերակառուցում" տողով 18596.0 հազար դրամ, իրականցվել 13473.9 հազար դրամ, 2012 թ.-ին նախատեսվել է "Օլիմպիական հերթափոխի մենապայքարային մարզադպրոցի երկրորդ հարկի կառուցում կամ վերակառուցում" տողը 6003.0 հազար դրամ, իրականացվել է 6002.1 հազար դրամ:

Այլ տարիներին, ինչպես նաև այլ խնդիրների ուղղությամբ կապիտալ ծախսեր չեն եղել են:

**Համատիրությունների և բնակարանային տնտեսության կողմից համակարգվող աշխատանքներ**

1. Համայնքային ներդրում.

ա) բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ֆինանսական ներդրում՝ 200 մլն (երկու հարյուր միլիոն) դրամ

2012 –ին համայնքի բյուջեից դրամաշնորհներ են հատկացվել,, Ջուխտ ախպուր,,,, Խանդակ,,,, Շինարար" համատիրությունների տանիքների նորոգման նպատակով 2292.8 հազար դրամ (2.3 միլիոն) ընդհանուր արժեքով

[6] http: //cmis.vanadzor.am/Pages/AssetManagement/Building/List.aspx

բ) բազմաբնակարան շենքերի վերելակների նորոգման և կարգաբերման աշխատանքների ֆինանսական ներդրում՝ 16 մլն (տասնվեց միլիոն) դրամ

2012 թ.-ին տրամադրվել է ընդամենը 1, 633.7 հազար դրամ,, Դիմաց,, և,, Ուսանողական,, համատիրությունների վերելակների նորոգում նպատակով: Այլ տարիների վերելակների վերանորոգման ծախսեր առանձնացված չեն:

գ) բազմաբնակարան շենքերի բակերում խաղահրապարակների և խաղային սարքավորումների կառուցման հիմնանորոգման աշխատանքների ֆինանսական ներդրում՝ 24 մլն (քսանչորս միլիոն) դրամ.

2010 թ.-ին համայնքի բյուջեից աջակցություն է ցուցաբերվել "Վանաձորի բազմաբնակարան շենքեր և բակեր" հիմնադրամին 500.0 հազար դրամի չափով: 2009-2012 բյուջեով բակերում խաղահրապարակների համար ծախսեր առանձնացված չեն:

դ) Վ. Համբարձումյան փողոցի թիվ 8 բազմաբնակարան շենքի առաջին և երկրորդ հարկերի վերակառուցում՝ ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարանով ապահովելու համար՝ 20 մլն (քսան միլիոն) դրամ:

Նշված խնդրի փոխարեն 2010 թ. բյուջեով նախատեսված է Տարոն-3, ՔՇՀ-7 թաղամասում անօթևան ընտանիքների համար բնակարանների կառուցում 42,289.2 հազար դրամի չափով:

2. ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած, տնակներում բնակվող ընտանիքներին տրվող ֆինանսական աջակցություն՝ բնակարան վարձակալելու համար՝ 8 մլն (ութ միլիոն) դրամ:

Այս հոդվածով 2009 –ին նախատեսվել էր 2000.0 հազար դրամ, սակայն բյուջեն ճշտելուց հետո, այդ գումարը ընդհանրապես հանվել է: Մյուս տարիների համար այս հոդվածով ծախսեր չեն նախատեսվել:

3. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ֆինանսական աջակցություն՝ 8 մլն (ութ միլիոն) դրամ:

Այս հոդվածով համայնքի 2009-2012թթ բյուջեով ֆինանսական միջոցներ առանձնացված չեն:

4. Ուսանողական փողոցի թիվ 10 հանրակացարանի տանիքի և սանիտարական հանգույցների նորոգման աշխատանքներ՝ 8 մլն (ութ միլիոն) դրամ:

2012թ բյուջեով նախատեսված է 5 միլիոն "Բազմաբնակարան շենքերի աղբամուղների աղբարկղների և քարշակների վերանորոգում" տողով, իրականացվել է 4989.5 հազար դրամ:

**Ճարտարապետություն և քաղաքաշինություն**

Ոլորտի համար քառամյա զարգացման ծրագրով առանձնացված է 5 նպատակ, որոնք բաղկացած են 11 խնդիրներից: Ընդհանուր առմամբ ոլորտին նախատեսված է հատկացնել 2,077,000.0 հազար դրամ 4 տարիների ընթացքում: Նշված գումարը հասկանալի է, որ իրատեսական չէ համայնքի բյուջեի մեծության պարագայում:

**Նպատակ 1.** 2009-2012թթ. քաղաքի կենտրոնի բեռնաթափում, ծայրամասային թաղամասերի զարգացում և քաղաքի ընդհանուր համաչափ զարգացում

ա) Բազում թաղամասի գոտիավորման նախագծի պատվիրում

Աշխատանքները նախատեսված են իրականացնել 2009 թ.-ին, որի ծախսերը գնահատված են 10,000.0 հազար դրամ: 2009 թ. բյուջեով նախագծահետազոտական աշխատանքների համար նախատեսվել է 18,000.0 հազար դրամ, ծախսվել է՝ 12,164.0 հազար դրամ:

բ) Կենտրոն թաղամասի գոտիավորման նախագծի պատվիրում

Աշխատանքները նախատեսված են իրականացնել 2010 թ.-ին, ծախսերը գնահատված են 25,000.0 հազար դրամ: 2010 թ. բյուջեով նախագծահետազոտական աշխատանքների համար նախատեսվել է 20,902.9 հազար դրամ, ծախսվել է՝ 18,600.9 հազար դրամ:

գ) Խնձորուտ թաղամասի գոտիավորման նախագծի պատվիրում

Աշխատանքները նախատեսված են իրականացնել 2011 թ.-ին, ծախսերը գնահատված են 8,500.0 հազար դրամ: 2011թ. բյուջեով նախագծահետազոտական աշխատանքների համար նախատեսվել է 12,000.0 հազար դրամ, ծախսվել է՝ 11,995.2 հազար դրամ:

դ) Առափնյա թաղամասի գոտիավորման նախագծի պատվիրում

Աշխատանքները նախատեսված են իրականացնել 2012 թ.-ին, ծախսերը գնահատված են 6,000.0 հազար դրամ:

ե) Առողջարանային (Լազեր) թաղամասի գոտիավորման նախագծի պատվիրում

Աշխատանքները նախատեսված են իրականացնել 2012 թ.-ին, ծախսերը գնահատված են 8, 000.0 հազար դրամ:

Ընդամենը տարվա ընթացքում իրականացվելիք աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ գումարը գնահատվել է 14,000.0 հազար դրամ: 2012թ. բյուջեով նախագծահետազոտական աշխատանքների համար նախատեսվել է 10,000.0 հազար դրամ, ծախսվել է՝ 9,986.4 հազար դրամ:

**Նպատակ 2.** Գործող գերեզմանատների տարածքների ընդլայնում

Նպատակի իրականացման համար սահմանված միակ խնդիրը կենտրոնական գերեզմանատան ընդլայնման նախագիծն է: Քառամյա զարգացման ծրագրով նախատեսված է 3,500.0 հազար դրամ:

2009-2012թ ընթացքում կատարվել է գերեզմանների ընթացիկ սպասարկում շուրջ 3,200.0 հազար դրամ տարեկան գումարով: Աշխատանքներ են կատարվել նաև վերանորոգման, հենապատերի ամրացման, սակայն նախագծման համար գումարներ առանձնացված չեն:

**Նպատակ 3.** Համայնքի քաղաքաշինական կենսագործունեության կարգավորում

ա) Փողոցների և կառույցների անվանատախտակների պատրաստում, հասցեավորում

Աշխատանքները նախատեսված են իրականացնել 2009-2012թթ, յուրաքանչյուր տարվա համար ծախսերը գնահատված են 2, 000.0 հազար դրամ: 2009 թ. բյուջեով նշված ուղղությամբ ծախսեր չեն նախատեսվել և չեն իրականացվել: 2010 թ.-ին նախատեսվել է 3,000.0 հազար դրամ, սակայն բյուջեն ճշտելուց հետո այդ ծախսը հանվել է, 2011 թ.-ին նախատեսվել է 5,000.0 հազար դրամ, որը պահպանվել է նաև ճշտված բյուջեով, սակայն չի իրականցվել, 2012 թ.-ին նախատեսվել է 5,000.0 հազար դրամ իրականցվել է 4,940.6 հազար դրամ: Փաստորեն չորս տարիների ընթացքում իրականացված ծախսը ծրագրով նախատեսվածի 60% է:

բ) Համայնքային ենթակայության կառույցների նորոգում և ամրացում

Խնդիրը հնարավորինս լայն է սահմանված, հստակեցված չեն կառույցների նշանակությունը, տիպը, վայրը, քանակը: Գնահատված գումարը յուրաքանչյուր տարվա համար 150,000.0 հազար դրամ:

2009 թ.-ին ընդամենը ֆոնդային բյուջեով նախատեսվել է 44,977.5 հազար դրամ իրականացվել 44,441.5 հազար դրամ, ինչը մոտ 3 անգամ փոքր է ծրագրով սահմանվածից, 2010 թ.-ի ֆոնդային բյուջեն կազմել է 131,619.1 հազար դրամ, ինչը ևս փոքր է սահմանվածից: 2011 թ.-ին իրականացվել է 161,692.8, 2012 թ.-ին 354,836.2, իհարկե հիմնավոր չէ կարծել, որ ամբողջ միջոցներն ուղղվել են այս խնդրի իրականացմանը:

**Նպատակ 4.** Բնակարանային և հասարակական սպասարկման մակերեսների ավելացում

ա) Կիսակառույց շինությունների ավարտման աշխատանքներ

Խնդրի իրականացման համար յուրաքանչյուր տարի ծրագրով նախատեսված է 150 մլն դրամ: Վերը բերված ֆոնդային բյուջեի թվերը ցույց են տալիս, որ այս ուղղությամբ ծախսերը նույնպես անիրական են գնահատված: Սակայն ի տարբերություն նախորդի, խնդիրը իր ձևակերպմամբ արտացոլված է տարեկան բյուջեում և հնարավորություն է ընձեռում տեսնել տարեկան ծախը: 2009 թ.-ին նախատեսվել է Տարոն-2 ՔՇՀ 7 թիվ 36 և 37 անավարտ շենքերի շինարարությունը, որի համար նախատեսվել է 98,170.0 հազար դրամ, իրականացվել 36,252.0: Նույն շենքերի շինարարությունը շարունակվել է 2010 թ.-ին՝ նախատեսվել է 61,848.0 հազար դրամ իրականացվել 61,848.0 հազար դրամ, 2011 թ.-ին նախատեսվել է և ծախվել 9,876.3 հազար դրամ, 2012 -ին ծախս չի նախատեսվել: Ընդամենը ծախսվել է 107,976.3 ծրագրով նախատեսված 600 մլն դրամի փոխարեն:

բ) Նոր բնակելի և հասարակական շինությունների կառուցում

Ծրագրով նոր բնակարաններ կառուցելու համար նախատեսված է 800 մլն դրամ, ինչը գերազանցում է ֆոնդային բյուջեի մեծությունների գումարը բոլոր տարիների համար: Ինչևիցե 2011 թ.-ին իրականացվել է 545.8 հազար դրամի ծախս Տարոն-3, ՔՇՀ-7 թաղամասում անօթևան ընտանիքների համար բնակարանների կառուցման համար:

**Նպատակ 5.** Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի աշխատանքի արդյունավետության բարձրացում

Նպատակի իրականացման համար նախատեսվել է մասնագիտական գույքի, գործիքների և սարքավորումների ձեռքբերում, տարեկան 2000.0 հազար դրամ արժողությամբ: Այս ծախսերը հիմնականում կատարվում են վարչական բյուջեի հաշվին և դրանք հիմնականում առանձին տողով չեն նշվում:

# 4. Վանաձոր համայնքի 2009 - 2012 թթ. և 2013 - 2016 թթ. զարգացման ծրագրերի համեմատական ուսումնասիրություն

2009-2012 թթ. և 2013-2016 թթ. համայնքի զարգացման քառամյա ծրագրերի (այսուհետ՝ զարգացման ծրագիր) մանրամասն համեմատական վերլուծությունը ներկայացնում ենք այս բաժնում: Հիմնականում ենք երկու ծրագրերի միջև եղած տարբերություններին:

**Քաղաքապետի ուղերձ**

| 2009-2012 թթ. | 2013-2016 թթ. |
|---|---|
| *Զեզ* ներկայացվող քառամյա զարգացման ծրագիրը առաջիկա չորս տարիների համար հանդիսանալու է Վանաձոր քաղաքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Քառամյա զարգացման ծրագիրը ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն *իրենից* ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային ոյուջետավարման գործընթացի իրականացում: | Ներկայացվող քառամյա զարգացման ծրագիրը առաջիկա չորս տարիների համար հանդիսանալու է Վանաձոր քաղաքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Քառամյա զարգացման ծրագիրը, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ մշակում է համայնքի ղեկավարը և նրա աշխատակազմը, քննարկվում ե հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծությանը և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունը, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: |
| Քառամյա զարգացման ծրագիրը *իր մեջ* ներառում է նաև Հայաստանի Հանրապետության նախագահի, Վանաձորի քաղաքապետի նախընտրական ծրագրերի բաղկացուցիչները և Հայաստանի | Քառամյա զարգացման ծրագիրը ներառում է նաե Հայաստանի Հանրապետության նախագահի, Վանաձորի քաղաքապետի նախընտրական ծրագրերի բաղադրիչները ե Հայաստանի Հանրապետության |

| | |
|---|---|
| Հանրապետության Կառավարության ծրագրի հիմնական քաղաքականությունը:<br><br>Վանաձոր քաղաքի ներդաշնակ և համաչափ զարգացման, վանաձորցիների բարեկեցության ապահովման համար առաջիկա չորս տարիներին քառամյա զարգացման ծրագիրը հանդիսանալու է մեր ամենօրյա աշխատանքային փաստաթուղթը:<br><br>*Մեր բոլորիս ջանքերն ու եռանդը պետք է նպատակաուղղենք Վանաձոր քաղաքի զարգացմանն ու բարգավաճմանը:* | Կառավարության ծրագրի հիմնական քաղաքականությունը:<br><br>Վանաձոր քաղաքի ներդաշնակ ե համաչափ զարգացման, վանաձորցիների բարեկեցության ապահովման համար առաջիկա չորս տարիներին քառամյա զարգացման ծրագիրր հանդիսանալու է մեր ամենօրյա աշխատանքային փաստաթուղթր: |
| **Դիտարկում՝** Համայնքի ղեկավարի ուղերձի փաստացի կրկնությունը նշանակում է, որ համայնքի խնդիրները և դրանց լուծման մոտեցումները չեն փոխվել: | |

**Վանաձորի համայնք**

Զարգացման երկու ծրագրերի սկզբում ներկայացված են փաստական տվյալներ: 2009-2012 թթ. Վանաձոր համայնքի զբաղեցրած տարածքը 2638 հեկտար է, իսկ 2013-2016 թթ.-ին 2599,33հա, փաստացի Վանաձոր համայնքի վարչական տարածքը փոքրացել է, որի պատճառները ծրագրում ներկայացված չեն:

Համայնքի իրավիճակը բնութագրելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և խոչընդոտների վերլուծություն (SWOT վերլուծություն), որը ներկայացված է «Ֆիզիկական և ժողովրդագրական իրավիճակներ» բաժնում: Այս բաժնում միակ փոփոխությունը խոչընդոտների ցանկից վերացել է «շարունակաբար հատվող անտառներ» կետի բացակայությունն է: Քանի որ մինչ 2009 թ զարգացման ծրագրերի մեր կողմից չեն ուսումնասիրվել, չենք կարող հստակ նշել, թե երբ է առաջին անգամ իրականցվել SWOT վերլուծությունը: Համեմատելով երկու զարգացման ծրագրերում ներկայացված SWOT վերլուծության արդյունքները կարող ենք եզրակացնել, որ որևէ զարգացում կամ փոփոխություն տեղի չի ունեցել:

2009-2012 թթ. զարգացման ծրագրում ներկայացված է Վանաձոր քաղաքի ժողովրդագրական մանրամասն պատկերը, որը բացակայում է 2013-2016 թթ. ծրագրում: 2009-2012 թթ. զարգացման ծրագրում ներկայացված ժողովրդագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր թվական տվյալների և ըստ տարիքային խմբերի թվական տվյալների միջև կան էական անճշտություններ: Միաժամանակ մեծ տարբերություններ կան զարգացման ծրագրում ներկայացված ժողովրդագրական տվյալների և այլ աղբյուրների տվյալների միջև:

Այսպես 2009-2012 թթ. զարգացման ծրագրում համայնքի բնակչության թիվը կազմում է 137 207 մարդ, նույն ծրագրի գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնում (էջ 43) նշվում է, որ համայնքում հաշվառված բնակչության թիվը կազմում է 106000 մարդ, փաստացի (աղբահանությունից օգտվողների թիվը)՝ 70000 մարդ (2009-2012 թթ. ծրագիր էջ 43): Նկատենք, որ Լոռու մարզի 2010-2013 թ թ զարգացման ծրագրով Վանաձոր համայնքի բնակչությունը կազմում է 137577 բնակիչ, իսկ ՀՀ Լոռու մարզպետի 2011 թ տարեկան հաշվետվության մեջ - 107394 բնակիչ:

2013-2016 թթ. զարգացման ծրագրում Վանաձորի մշտական բնակչության թիվ ներկայացված է 104 800 (2012 թ. ապրիլի 1-ի դրությամբ) (էջ 4), իսկ նույն ծրագրի աղբահանության գծով տուրքերի բաժնում (էջ 41) Վանաձոր համայնքի տարածքում հաշվառված բնակչության թիվը կազմում է 105 000 բնակիչ, փաստացի բնակչության թիվը՝ 97 000, և 2013 թ. աղբահանությունից օգտվողների թիվը ըստ կանխատեսումների կլինի 77 000 բնակիչ: Նկատենք, որ 2009-2012 թթ. հաշվառված բնակչության թիվը կազմել է 106 000 մարդ, իսկ աղբահանության ծառայությունից օգտվողների թիվը կազմել է 70 000, իսկ 2013-2016 թթ. զարգացման ծրագրում նվազել է հաշվառված բնակիչների թիվը՝ միաժամանակ ավելացել է աղբահանությունից օգտվողների թիվը:

2008 թվականին Վանաձոր համայնքի ընտրողների թիվը ըստ ծրագրի կազմում է 95520 մարդ (տե՛ս աղյուսակ 27): Քանի որ համայնքում հաշվառված բնակիչների թիվը կազմում է 106 000 մարդ, որից 17 903 մինչև 17 տարեկան (տե՛ս 2009-2012 թթ. զարգացման ծրագիր էջ 3), ընտրողների թիվը չպետք է գերազանցեր 85 000-ը:

Աղյուսակ 27. Վանաձոր քաղաքի ժողովրդագրական տվյալներ 2009-2012 թթ. զարգացման ծրագիր, էջ 3

| 1.Համայնքի մշտական բնակչության ընդհանուր թիվը | 137207 | Ընդհանուր* |
|---|---|---|
| - տղամարդ | 66410 | 137174 |
| - կին | 70764 | |
| - նախադպրոցական տարիքի (0-6 տարեկան) | 5493 | 17903 |
| - դպրոցական տարիքի ( 7-17 տարեկան) | 12410 | |
| - միջին տարիքի (18-60 տարեկան) | 66161 | 82187 |
| - 60 տարեկանից բարձր | 16026 | |
| - ընտանիքների թիվը | 36300 | |
| - գրանցված ընտրողների թիվը | 95520 | |

*ընդհանուր թվերը ստացվել են մեր կողմից

Ինչպես տեսնում ենք տղամարդկանց և կանանց գումարը կամզում է 137 174, մինչև բնակչության ընդհանուր թիվը նույն աղյուսակում ներկայացված է 137207: Միջին տարիքի և 60 տարեկանից բարձր բնակիչների թիվը, որոնք կազմում են հենց ընտրողները, ըստ ծրագրի աղյուսակի կազմում է 82 187 մարդ, մինչդեռ ծրագրում նույն աղյուսակում ընտրողների թիվը ներկայացված է 95520, տարբերությունը կազմում է 13 333:

Նկատենք, որ 2012 թ. մայիսին խորհրդարանական ընտրությունների Վանաձոր քաղաքի ընտրողների հիմնական ցուցակում գրանցված է եղել 96 319 ընտրող (ըստ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջի), իսկ 2012 թ. սեպտեմբերին Վանաձոր համայնքի ինքնակառավարման մարմինների ընտրություններում ընտրողների հիմնական ցուցակներում գրանցված է եղել 96 248 ընտրող: Հաշվի առնելով, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները հաջորդել են 2012 թ. գարնանային զորակոչին, որն ավարտվել է հունիս ամսին, հետևաբար կամ Վանաձոր համայնքից զորակոչվել է 71 զորակոչիկ կամ զորակոչված երիտասարդները չեն հանվել գրանցումից զորակոչվելուց հետո և մնացել են ընտրողների ցուցակում, կամ պետք է ենթադրել, որ խորհրդարանական ընտրություններում Վանաձոր համայնքի ընտրողների ցուցակում ընդգրկված զինվորական մասերի ծառայողները մնացել են ներգրավված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հիմնական ցուցակում: Քանի որ 2013-2016 թթ. զարգացման ծրագրում ժողովրդագրական պատկերը ներկայացված չէ, ապա հնարավոր չէ համեմատել տեղի ունեցած փոփոխությունները:

## Աշխատանքային շուկա

Աշխատանքային շուկայի SWOT վերլուծությունը նույնպես չի վերանայվել, այսինքն թեև պարբերաբար կազմակերպվում են աշխատանքի տոնավաճառներ և զբաղվածության խթանման այլ միջոցառումներ, դրանց արդյունավետություն չի գնահատվել:

Աղյուսակ 28. Աշխատանքային շուկայի SWOT վերլուծություն ըստ 2009-2012 թթ. էջ 4 և 2013-2016 թթ. էջ 4

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը | Հնարավորու-թյուններ | Խոչընդոտներ |
|---|---|---|---|
| - բարձրորակ մասնագետների մեծ քանակ<br>- փոփոխություն ներին արագ հարմարվող աշխատանքային ուժ | - մասնագետները չեն օգտագործել իրենց մասնագիտական գիտելիքները և հմտությունները երկար տարիներ<br>- միջազգային ստանդարտների վերաբերյալ գիտելիքի պակաս<br>- լավ կազմակերպված աշխատաշուկայի բացակայություն<br>- օրենսդրական ոչ կատարյալ դաշտ<br>- թաքնված գործազրկության բարձր մակարդակ<br>- աշխատանք գտնելու օժանդակող մասնավոր գործակալությունների բացակայություն | - փոքր և միջին բիզնեսի զարգացում տարբեր միջազգային կազմակերպու-թյունների գործունեություն ներ<br>- ներդրումների հնարավորու-թյուններ | - տնտեսական գործունեու-թյան համար անհամապա-տասխան շրջակա միջավայր |

**Վանաձոր քաղաքի կոմունալ ունեցվածքը**

«Վանաձոր քաղաքի կոմունալ ունեցվածքը» բաժնում ճանապարհների ծածկույթը 2009-2012թթ. ծրագրով կազմում է 1 433 360 մ², 2013-2016 թթ. ծրագրով՝ 1 246 885 մ² - տարբերությունը՝ 186475 մ²: Նույն բաժնում, մայթերի ծածկույթը համապատասխանաբար՝ 375 330 մ² և 376 836 մ² - տարբերությունը՝1506 մ²: Տվյալների համեմատությամբ կարելի է եզրակացնել, որ Վանաձոր համայնքի ներհամայնքային ճանապարհների մակերեսը կրճատվել է, բայց ոչ մայթերի ավելացման հաշվին, սակայն պատճառները ծրագրում ներկայացված չէ:

2009-2012 թթ. զարգացման ծրագրով նախատեսված է եղել տարեկան ավելացնել 1000 տնկի (ընդհանուրը՝ 4000 տնկի), նույն ծրագրում, որը կազմվել է 2008 թ., առկա ծառերի քանակը նշված է 9216 ծառ (տե՛ս էջ 4) մինչդեռ 2013-2016 թթ. զարգացման ծրագրում, որը կազմվել է 2012 թ. ծառերի քանակը նշվել է 9200, այսինքն ծառերի քանակը նվազել է 16-ով:

2009-2012 թթ. զարգացման ծրագրով հաշվառված է թվով 9 հրապարակ, սակայն 2013-2016 թթ. զարգացման ծրագրով՝ թվով 7 հրապարակ, այսինքն նվազել է նաև հրապարակների թիվը:

**Նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերաբերյալ տվյալներ**

2009-2012 թթ. զարգացման ծրագրով՝ Վանաձոր համայնքում գործող 20 նախադպրոցական հաստատություններից (ՆՈՒՀ) 4 տեղակայված է եղել տնակներում: 2013-2016 թ. զարգացման ծրագրում վերստին 20 ՆՈՒՀ-երից տնակային պայմաններում գործում են 3-ը: 4 տարվա ընթացքում միայն 1 ՆՈՒՀ է տեղափոխվել քարաշեն պայմաններ: Ի դեպ 2009-2012 թթ. զարգացման ծրագրում ներկայացված նախադպրոցական ուսումնական հաստատությունների խնդիրները կրկնվում են 2013-2016 թթ. զարգացման ծրագրում: Թեև որոշ նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրականացվել է գազաֆիկացում, սակայն վերանորոգման և մի շարք այլ հիմնական խնդիրներ չեն լուծվել և միաժամանակ ավելացել է նոր խմբեր բացելու պահանջը, որը առկա ռեսուրսների դեպքում կարող է արդյունավետ չլինել (էջ 33):

2012 թ. տվյալներով ՆՈՒՀ-եր հաճախում են թվով 1961 երեխա, մինչդեռ ըստ նախագծային հնարավորությունների, հաստատությունները կարող են ապահովել թվով 2365 հաճախելիություն: Մյուս կողմից հատկանշական է, որ ՆՈՒՀ-եր հաճախող երեխաների թվի աճին զուգահեռ (2008թ.-ին 1570, 2012 թ.-ին՝ 1961) նույն ժամանակահատվածում նվազել է դաստիարակների և օժանդակ աշխատողների թիվը՝ 336-ից հասնելով 305-ի:

**Հանրակրթական դպրոցների և մարզադպրոցների վերաբերյալ տվյալներ**

2009-2012 թթ. ընթացքում նվազել է Վանաձոր համայնքի մարզադպրոցների հաճախող երեխաների թիվը 2852-ից դառնալով 2277, և մարզիչների և օժանդակ աշխատողների թիվը՝ 385-ից դառնալով 266:

Այնուամենայնիվ, 2013-2016 թթ. զարգացման ծրագրում մանրամասն ներկայացվել են սպորտի բանգավառում իրականացվելիք աշխատանքները, թեև նշված չէ դրանց համար անհրաժեշտ գումարը և ժամկետները:

Զգալի նվազել է նաև հանրակրթական դպրոցների աշակերտների և ուսուցիչների ու օժանդակ աշխատողների թիվը, ինչը ևս հիմք է տալիս կարծելու, որ ընդհանուր ժողովրդագրական թվերը ուռճացված են:

Գծապատկեր 20. Վանաձոր քաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտների, ուսուցիչների և ուսումնաօժանդակ աշխատողների թիվը, 2009-2012 թթ. զարգացման ծրագիր էջ 12, 2013-2016 թթ. զարգացման ծրագիր էջ 11




Աղյուսակ 29. Հանրակրթական դպրոցների աշակերտների և աշխատակիցների թիվը

| Թիվ | Դպրոցների թիվ | Ուսուցիչների թիվ | Ուսումնաօժանդակ աշխատողների թիվ | Աշակերտների թիվ |
|---|---|---|---|---|
| 2006 | 29 | 1246 | 438 | 14562 |
| 2007 | 29 | 1260 | 431 | 13762 |
| 2008 | 29 | 1279 | 444 | 13147 |
| 2009 | 30 | 1061 | 127 | 12176 |
| 2010 | 26 | 903 | 100 | 9268 |
| 2011 | 26 | 928 | 98 | 9562 |
| 2012 | 26 | 938 | 102 | 8248 |

Գծապատկեր 20-ից և աղյուսակ 29-ի տվյալներից տեսնում ենք, որ աշակերտների թիվը 6 տարվա ընթացքում նվազել է 43%-ով, ուսուցիչների թիվը 25 %-ով, օժանդակ աշխատողների թիվը 77%-ով, նույն ժամանակահատվածում դպրոցների թիվը նվազել է 3-ով: Եթե համեմատենք 2008 թ. դպրոցական տարիքի 7-17 տտ թիվը 12414, դպրոցներում ընդգրկված աշակերտների թվի հետ 13147, ապա կտեսնենք, որ դպրոցներում

աշակերտների թիվը ավելին է քան դպրոցահասակ երեխաների թիվը, որից կարելի է եզրակացնել, որ դպրոցներում տեղի ունի աշակերտների «հավելագրում»:

**Վանաձորի քաղաքապետարանի գործունեության հիմնական գերակայությունները և ուղղությունները**

Զարգացման ծրագրերում Վանաձորի քաղաքապետարանի գործունեության հիմնական գերակայություններն ու ուղղությունները կրել են միայն խմբագրական փոփոխություններ: Տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրած ծառայությունների որակի տեսանկյունից կարևորվել է տեղեկատվական տեխնոլոգիաների բարելավումը և աշխատակիցների վերապատրաստումը, որը որոշ չափով իրականացվել է: Սակայն չի իրականացվել այդ ծառայությունների որակի բարձրացման գնահատումը, որը պետք է կատարվեր համայնքի բնակիչների շրջանում ՏԻՄ-ի գործունեության թափանցիկության մակարդակը պարզելու և համայնքի զարգացման վերաբերյալ համայնքի բնակիչների կարծիքի ուսումնասիրման միջոցով: նմանապես, չի իրականացվել նաև համայնքի բնակչության կարիքի գնահատում/կենսական շահերի հետազոտություն, որի համար համայնքի զարգացման ծրագրով նախատեսվել է տարեկան 1 000 000 դրամ, սակայն բյուջետային հատկացում չի իրականցվել:

Նմանապես գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության՝ Վանաձորի համայնքի զարգացման բիզնես ծրագրի մշակումը տեղափոխվել է 2013-2016 թթ. համայնքի զարգացման ծրագիր՝ վերանվանվելով «Վանաձորի համայնքում բիզնեսի զարգացմանն ուղղված ներդրումային և ոլորտային բիզնես ծրագրի մշակում»:

**Կոմունալ տնտեսություն և բարեկարգում**

Վանաձոր համայնքի կոմունալ բարեկարգման խնդիրներն ու գործողությունները նույնպես միայն շարահյուսական խմբագրման են ենթարկվել: Ավելին, ըստ էության առկա խնդիրները որևէ փոփոխության չեն ենթարկվել կամ ավելացել են: Հիմնականում նույնն են մնացել նաև լուծման ուղիները, ինչը հասկանալի չէ՝ հաշվի առնելով այն, որ ըստ էության լուծման այդ ուղին նախորդ չորս տարիների ընթացքում արդյունավետ չի եղել:

Խրախուսելի է, որ 2013-2016 թթ. համայնքի զարգացման ծրագրով նախատեսվում է որոշակի վերահսկողություն իրականացնել հանրային տարածքների վարձակալների պարտավորությունների իրականացման վրա, որը հնարավորություն կտա բարեկարգել հանրային օգտագործման տարածքները:

**Ճարտարապետություն և քաղաքաշինություն**

2013-2016 թթ. համայնքի զարգացման ծրագրում Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի գործունեության մեջ ավելացել է քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակումը, մնացած գործողությունները հիմնականում մեխանիկորեն տեղափոխվել են նախորդ ծրագրից, երբեմն առանց անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալի հստակեցման:

Ինչպես արդեն նշել ենք, 2009-2012 թթ. զարգացման ծրագրով բնակարանաշինության ոլորտում նախատեսվել էր անիրատեսականորեն մեծ գումար ( սույն զեկույցի էջ 36), այս բաժինը հանված է 2013-2016 թթ. զարգացման ծրագրից:

**Կրթություն, մշակույթ և սպորտ**

Կրթության և մշակույթի ոլորտում իրականացվող օպտիմիլացման, կապիտալ շինարարության, վերանորոգման և գույքի ձեռքբերման առումով ևս միջոցառումները գրեթե նույնությամբ կրկնվում են 2013-2016 թթ. զարգացման ծրագրում՝ առանց անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հստակեցման:

Ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում նախատեսված գործողություններն ավելի մանրամասն են ներկայացված 2013-2016 թթ., խիստ մանրամասն է ներկայացված նաև ձեռք բերման կարիք ունեցող գույքի ցանկը: Թեև կրկին նշված չէ անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը, սակայն նման մանրակրկիտ ներկայացումը հուշում է, որ ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառը կարևոր առաջնահերթություն է հանդիսանալու համայնքի համար:

**Բնակարանային ֆոնդի հաշվառում և բախշում, համատիրություններ և բնակարանային տնտեսություն**

Բնակարանային ֆոնդի հաշվառման և բաշխման առումով գործողություններն ըստ էության մեխանիկորեն տեղափոխվել են նոր զարգացման ծրագրի առաջին տարվա մեջ, որոշակի թվական փոփոխություններով: Կրկին նշված չէ անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը:

Բազմաբնակարան շենքերի վերանորոգման առումով ինչպես արդեն նշվել է իրականացվել են չնչին ծախսեր, այնուամենայնիվ համայնքի զարգացման 2013-2016 թթ. ծրագրով միևնույն գործողությունների համար նախատեսվող ծախսերը կրկնապատկվել են, այս դեպքում նախատեսելով, որ համայնքային ներդրումը կլինի պահանջվող գումարի 10%-ը, ևս 15%-ը նախատեսվում է հավաքագրել բնակիչներից, իսկ մնացած 75%-ը ապահովել ՀՀ Կառավարության կամ այլ դոնորների միջոցով:

**Ծրագրեր և արտաքին հարաբերություններ, համայնքի տուրիզմի զարգացման և իրագործման ռազմավարություն, համայնքի տնտեսական զարգացում**

Ծրագրերի և արտաքին հարաբերությունների առումով նպատակների, խնդիրների և դրանց լուծման ուղիների առնչությամբ փոփոխություններ գրեթե չեն կատարվել, բացի չնչին ոճական շտկումներից: Արտաքին հարաբերությունների առումով ավելացել են քույր քաղաքները, սակայն հստակ չէ, թե համագործակցության արդյունքում կոնկրետ ինչ ծրագրեր են իրականացվել:

2013-2016 թթ. զարգացման ծրագրում նշվում է, որ Վանաձոր քաղաքի 2012-2022 թթ. զարգացման ծրագրից բխող գերակայություններից ելնելով 2013-2016թթ. համայնքի զարգացման համար ընտրվել են Գերմանիայի Լայպցիգ քաղաքի հետ համագործակցության կոնկրետ ոլորտներ (տե՛ս էջ 43)՝ համայնքի տնտեսական

զարգացում, աղբահանության համակարգի բարելավում, սպորտի և առողջ ապրելակերպի զարգացում և քաղաքի զարգացում:

Վանաձոր համայնքում տուրիզմի զարգացման և իրագործման ռազմավարության և տնտեսական զարգացման բնագավառում որպես միակ փոփոխությունը կրկին մեջբերվել է Վանաձոր քաղաքի 2012-2022 թթ. զարգացման ծրագրից, որով նախատեսվում են մի շարք ծրագրեր, սակայն հստակ չեն իրականացման ժամկետները և պահանջվող ֆինանսական ռեսուրսների ծավալը:

**Իրավաբանական բաժին**

2009-2012 թթ. զարգացման ծրագրում իրավական ոլորտում իրականացվելիք գործողությունները նույնությամբ վերաշարադրված են 2013-2016 թթ. զարգացման ծրագրում, ավելացվել է քաղաքացիների ընդունելության կարգի ընդունումը, համայնքի բնակիչներին՝ հարկերի, տեղական տուրքերի և վճարների վճարմանն առնչվող, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությանն իրազեկելու թեմաներով սեմինարների կազմակերպում, տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում՝ առավել զարգացած երկրների հետ իրավական, օրենսդրական հարցերով փորձի փոխանակում (տե՛ս էջ 46):

Ի դեպ համայնքի բնակիչների շահերի պաշտպանության տեսանկյունից, նշվում է օրենսդրական բացերի և հակասությունների վերացման անհրաժեշտությունը, սակայն նրանց մեխանիկական կրկնությունը վկայում է, որ այդ առնչությամբ որևէ գործողություն չի իրականացվել:

**Սոցիալական ոլորտ**

Սոցիալական ոլորտում համայնքի ղեկավարն ունի մի շարք պատվիրակված և կամավոր լիազորություններ, որի շրջանակներում ըստ 2013-2016 թթ. զարգացման ծրագրի նախատեսում է շարունակել համագործակցությունը համայնքի խոցելի խմբերին սպասարկող մի շարք կառույցների հետ, ինչպես նաև իրականացնելբարեգործական ծրագրեր որոշ անապահով խմբերի կենցաղային խնդիրների թեթևացման ուղղությամբ:

# Մեթոդական առաջարկություններ

Սույն զեկույցի նպատակն առաջին հերթին համայնքի ինքնակառավարման նկատմամբ համապարփակ մշտադիտարկման մոդելի և մոտեցման առաջարկումն է, որի հիմնական սկզբունքը համայնքի կառավարման տարբեր ասպեկտների համեմատական վերլուծությունն է: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից կիրառված ուսումնասիրության շրջանակը գրաֆիկորեն ունի հետևյալ պատկերը.

Գծապատկեր 21. Ուսումնասիրության շրջանակ




Համայնքի կառավարման մշտադիտարկման համար առաջարկվում է՝

- Ուսումնասիրել ՏԻՄ օրենքը, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակը
- Ուսումնասիրել համայնքի զարգացման քառամյա ծրագիրը ՝ նպատակների, խնդիրների և միջոցառումների հստակության և պահանջվող ֆինանսական ռեսուրսների իրատեսականության տեսակետից
- Ուսումնասիրել նույն ժամանակահատվածում ՏԻՄ-ի կայացրած բոլոր որոշումներն, ըստ բնագավառների, լիազորությունների և հիմքերի
- Ուսումնասիրել համայնքի տարեկան բյուջեն, թե եկամտային, թե ծախսային մասով, կանխատեսումները, փոփոխությունները և փաստացի կատարողականի վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունները,

# Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
2. «Տեղական ինքնակառավարման մասին “ ՀՀ օրենք
3. « ՀՀ Հողային օրենսգիրք”
4. « ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք”
5. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին” ՀՀ օրենք
6. « Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին” ՀՀ օրենք
7. ՀՀ Ընտանեկան օրենսգիրք”
8.ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք”
9. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին “ ՀՀ օրենք
10. «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանոցների ու դիակիզարանների շահագործման մասին” ՀՀ օրենք
11. <Տեղական տուրքերի և վճարների մասին” ՀՀ օրենք
12. « ՀՀ Բյուջետային համակարգի մասին “ ՀՀ օրենք
13. «Գույքահարկի մասին “ ՀՀ օրենք
14. « Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենք
15. « Տեղական տուրքերի և վճարների մասին “ ՀՀ օրենք
16. « Համայնքային ծառայությունների նմասին “ ՀՀ օրենք
17. « ՀՀ Աշխատանքային օրենսգիրք”
18. « Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին “ ՀՀ օրենք
1 9. «Հավաքների ազատության մասին “ ՀՀ օրենք
20. « ՀՀ Ընտրական օրենսգիրք”
21. ՀՀ Կառավարության որոշումներ-թիվ 2093-ն (2005թ.), 912-ն(2006թ.), 286 (2001թ.) 1328-ն (2008թ.) 1923 (2005թ.) 962-ն (2006թ.), 910-ն(2006թ.) 762 (2001թ.) 289 (2009թ.):
22.Վանաձոր համայնքի 2009-2012 թ թ զարգացման քառամյա ծրագիր
22.Վանաձոր համայնքի 2013-2016 թթ. զարգացման քառամյա ծրագիր
23 Վանաձոր համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվություններ (2008թ., 2009 թ., 2010թ., 2011թ):
24.Է. Հ. Օրդյան- «Համայնքային ծառայության հիմունքներ”, Երևան, 2009 թ.
25. Է. Հ.Օրդյան- «Տեղական ինքնակառավարման հիմունքներ”, Երևան, 2000 թ.

**«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»**
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001,
Հայաստանի Հանրապետություն,
հեռ. **(+374 322) 4 22 68**; ֆաքս: **(+374 322) 4 12 36,**
Ինտերնետային կայքէջ: **www.hcav.am**, էլ. Փոստ: **hcav@hcav.am**